

→ АМЛИКЪ ТУМАНЯНЪ ←

# ЛПРЦАРЪР



А. С. С. С.

1902

20000  
ЛПРЦАРЪР



# ԼՈՒՍԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Լ. ՇԱՆԹ



Համար 2  
ԲՈՒՍԱՆԵԱՆ

2  
63478.

Մեր հնքնուրոյն եւ փոխադրած յօղածների, հնչալէս եւ մեր նկարների  
արտատպութեան հրատմարը վերապահած է

Թ Ի Յ Լ Ի Ս  
ԵԼԵՔՏՐՈՆԳՐԱԲ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն ԱՂՍՆԵԱՆՅԻ, ՊՈԼԻՑ. 7.  
1908

ՀՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅՈՒՆԻՐԱՆԻ  
Домъ у мѣст. Свѣтосвѣтъ Туманяна



ԼՈՒՍԱԲԵՐ

ՀԱՅԿ

ՀԱՅԿ

ՀԱՅԿ



ՀԱՅԿ



# Լ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԱՅԿ

ՀԱՅԿ

ՀԱՅԿ

## 1. Առաջին

ՀԱՅԿ

ՀԱՅԿ

Հաւր խօսեց երեք բերան.

— Է՛յ քնածներ, ծուղրուղն,

Բացեց կարմիր աղօթարան,

Փամանակ է զարթելու:

Չարն ու չարկամ մութ խաւարին,

Խաւարն անցաւ չար ու վատ,

Աշխարհ լրցեց լուսն ու բարին,

Կուսն ու բարին անարատ:

Գիւղում աղմուկ, գիւղում խընդում,

Օրը պայծառ, բուրաւէտ,

Փիր մըշակի երգը հանգում

Չորնգում է գործի հետ:

1) Խաւարը ինչու է չար, լոյսը ինչու է բարի:

2) Իսկ խաւարում սրտեղ է թնդում գործը:





## 2. Աստծու սեղանը

1.

Գարնանը բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ ճիճուների համար:

Եւ իսկոյն կեռասենին ծածկեց կանաչ տերևներով:

Զարթնեց փոքրիկ ճիճուն, սկսեց կրծել թարմ տերևները

ու ասաւ.

—Ո՞վ է պատրաստել ինձ համար այս հրաշալի սեղանը:

Բարի Աստուածը նորից ասաւ:

—Սեղան բաց արէք ժիր մեղուի համար:

Եւ իսկոյն կեռասենին բաց արաւ իր սիպտակ ծաղիկները:

Մեղուն զարթնեց արշալուսին սւ տրզտրզալով թռաւ դէ-

պի կեռասենին: Թռչում էր ծաղկից ծաղիկ ու ամենրից մի

մի կաթիլ ծծում:



—Ա՛խ, ի՛նչ անուշ խմիչք է,—մտածում էր նա իր փեթակը շտապելով.—էս ո՞վ է պատրաստել ինձ համար:

2.

Եկաւ ամառը: Ու բարի Աստուածն ասաւ.

—Սեղան բաց արէք փոքրիկ թռչնակների համար:

Եւ կեռասենու վրա երևացին թարմ ու կարմիր պտուղները: Ուտում էին փոքրիկ թռչնակներն ու խաղում.



—Ա՛խ, ի՛նչ լիքը սեղան է. էս ո՞վ է բաց արել մեզ համար:

Աշնանը բարի Աստուածն ասաւ.

—Ամենքը լիացան. վեր բաղեցէք սեղանը:

Ու վեր կացաւ սառը քամին, թափեց տարաւ զեղնած տերևները: Տկտր կեռասենին դողում էր ցրտից:

—Ծածկեցէք դրան, որ չըմբսի,—ասաւ բարի Աստուածը:

Իսկոյն եկաւ ձմեռը ու փափուկ ձիւնով ծածկեց կեռասենու մերկ ճիւղերը:

1) Ո՞րն է մարդու սեղանը.

2) Ո՞վ է բաց անում մարդու սեղանը:

3) Ո՞րոնք են տարւայ ամիսները եւ ո՞րը որ եղանակին է ընկնում:

Առաժ. — Ծառի տակ պառկելով մարդու բերանը խուրձա չի ընկնի:

Շ ու լ տ ա ս ե լ ու կ. — Մեր դռանը կայ տասը ծանր-ծանր տան-ձի ծառ:

Զեր դռանն էլ կայ տասը ծանր-ծանր տանձի ծառ:



### 3. Հովիի հրաժեշտը

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,  
Ամառն անց կացաւ, հօտն իջնում է՝ տուն:

Մենք ետ կը գանք ձեզ նորեկ գարունքին,  
Երբ որ կըզարթնեն երգերը կըրկին,  
Երբ որ սարերը զուրբեն կանաչով,  
Երբ որ ջրերը վազեն կարկաչով:

Մնաք բարով, դուք, արօտներ սիրուն,  
Ամառն անց կացաւ, հօտն իջնում է տուն:

1) Հովիւը ինչո՞ւ է աշնանը սարից հեռանում:

2) Հօտը նրտեղ է անց կացնում՝ ո՞՞րտեղ:

Հանելուկ.—Մի կով ունեմ, տարէնք մէկ կաթ կը տայ, ո՞ր  
իսկի տուն չի գայ:

### 4. Ծիծեռնակների ջուռն

1.

Աշունը մօտենում էր:

Ծիծեռնակները ամեն իրիկուն հաւաքւում էին շարու  
մի կտուրի ծայրին կամ մի պարանի վրա ու անհանգիստ ծըլ  
ւըլում:

—Տեսնում էք,—խօսում էր մէկը,—ինչպէս խօտը դեզ  
նել է: Ամբողջ օրը դէս ու դէն ընկայ, հազիւ մի քանի թի  
թեռ ճարեցի:

—Էլ մի ասի,—ասում էր միւրը,—տերեւները թափւում  
են, ծառերը մերկանում, եղէգները չորանում են, մժղուկ  
ները չեն երևում: Լաւ է՝ աղբանոցներում դեռ ճանճեր ե  
ղժվժում:

—Բայց օրը, օրը ինչպէս կարճացել է,—թեւերը թափ տա  
լով մէջ մտաւ երրորդը.—Դեռ կշտացած չես լինում, մէկ

տեսար մթնեց: Գիշերներն էլ էնպէս ցոլրտ են լինում:

Էսպէս հաւաքւում ու գանգատւում էին ծիծեռնակները:

2.

Մի երեկոյ էլ բոլոր ծիծեռնակները ժողովեցին բարձր  
գանգակատան գլխին: Այնքան էին, որ գանգակատունը սեխ  
էր տալիս:

—Չէ, չէ,—ասում էին ծերերը.—էլ դիմանալու բան չի:

Մի քիչ էլ որ մնանք, սովից կը կոտորւենք:

—Բա ի՞նչ անենք,—մոլորւած հարցնում էին ջահելները:

—Պիտի չւենք,—յայտնեցին մեծերը:

Այդ գիշերը ծիծեռնակները բոլորը միասին անց կացրին  
եկեղեցու գմբէթին: Իսկ առաւօտը, վաղ լուսաբացին, ամ  
բողջ երամը վեր կացաւ ու պտոյտներ արաւ տների գլխին  
ճուղղելով:

—Մնա՛ք բարով, մեր սիրունիկ բնիկներ,—կանչում էին  
ծերերը:

—Մնա՛ք բարով, մեր փափուկ օրօրաններ,—կանչում էին  
ջահելները:

Ու յանկարծ բոլորը միասին սլացան դէպի վեր, բարձր,  
բարձր, ու ձգեցին դէպի հարաւ, դէպի տաք երկիրները:

Բարի ճանապարհ, բարի ծիծեռնակներ:

1) Էլ ինչ շող թռչուններ գիտէք:

2) Ինչո՞ւ են շում թռչունները:

### 5. Ծիծեռնակ



Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Ինչ գարնան սիրուն թռչնակ.  
Դէպի ո՞ւր, ինձ ասա,  
Թռչում ես այդպէս արագ:



## 6. Ճառփորդներ

1.



Աբլորը մի օր կտուրը բարձրացաւ, որ աշխարհք տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չը տեսաւ. դիմացի սարը խանգարում էր:

—Քուշի ախպէր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետեւն ի՞նչ կայ,— հարցրեց վերևից բակում պանկած շանը:

—Ես էլ չը գիտեմ,— պատասխանեց Քուշին:

—Հապա մինչև երբ պէտք է այսպէս մնանք, արի գնանք մի տեսնենք՝ աշխարհումս ի՞նչ կայ, ինչ չը կայ:

Շունն էլ համաձայնեց: Սօսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պանկեց մի թփի տակ, իսկ աբլորը բարձրացաւ մօտիկ ծառին, քնեցին:

2.

Լուսադէմին աբլորը կանչեց. ծուղրուղճ:

Մի աղէս լսեց աբլորի ձայնը:

—Վահ, սա ռրտեղից դուրս եկաւ. այ լաւ նախաճաշիկ,

—մտածեց աղէսը ու վազեց:

—Բարի լուս, սանհէր աբլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

—Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աբլորը:

—Օ՛, ինչ լաւ բան էք մտածել,— խօսեց աղէսը:— Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալի: Ինչ լաւ էր՝ պատահեցինք: Դէ, ցած արի, որ չուշանանք:

—Ես համաձայն եմ,— ասաւ

աբլորը.— տես, թէ ընկերս էլ

համաձայն է, ցած գամգնանք:



—Ռ՞րտեղ է ընկերդ:

—էտ թփի տակին:

«Սրա ընկերն էլ երևի իր նման մի աբլոր կը լինի. էս էլ իմ ճաշը», մտածեց աղէսը ու վազեց թփի կողմը: Յանկարծ որ շունը դուրս եկաւ, աղէսը, պնկ, փախաւ, սնց փախաւ:

—Կաց, աղէս ախպէր, մի վազի, մենք էլ ենք գալի, էտպէս ընկեր չի լինի,— ծառի գլխից ձայն էր տալի աբլորը:

1) Ի՞նչպէս ենք ասում էն մարդուն, որ ուզում է աշխարհքում շատ բան տեսնի ու իմանայ:

2) Աղէսն էլ ուզում էր աշխարհք տեսնի:

Ա. ո. ա. ծ.— Գայլի անունն է եղել, աղէսը աշխարհք քանդեց:

Հ. ա. ն. ե. լ. ո. կ.— Մի թոփ կտաւ ունեմ փռած, ծալում եմ ծալում, չի ծալում:

## 7. Եղնիկի տերը



Որսկանը սարերում որսի էր ման գալիս: Մին էլ ժայռի ետևից դէմն է նետւում մի սիրուն եղնիկ:

Եղնիկը շշկած կանգնում է, մնում է աչքերը գցած որսկանի աչքերին.

Որսկանը նշան է դնում, որ սպանի:

Յանկարծ առջևը յայտնւում է մի սիրունիկին, սարի ոգին, ու ձայն է տալիս:


—Կանգնի, անիրաւ. մի սպանի իմ

եղնիկին: Գու ապրում ես, սա էլ պիտի ապրի:

Որսկանը սարսափած ետ է գալիս տուն, հրացանը կախում է պատից ու այն օրւանից թողնում է որսկանութիւնը:

Որսկանը ինչո՞ւ թողեց որսկանութիւնը:





## 8. Աշուն

Դեղնած դաշտերին  
 Իջել է աշուն,  
 Անտառը կըրկին  
 Ներկել է նախշուն:  
 Պաղ պաղ մէգի հետ  
 Փըշում է քամին,  
 Քըշում է տանում  
 Տերևը դեղին:  
 Տըխուր հանդերից  
 Մարդ ու անասուն  
 Քաշում են կամաց  
 Ամենքն իրենց տուն:

Ինչո՞ւ են ասում՝ «աշունը իջել է»:

Հանելուկ. — Տասներկու մարդ մի ծառից քաշում են:

## 9. Խեղճ հաշի

Մի աղքատ տղայ կանգնել էր փոսն առջև ու ախորժակով նայում էր տաք-տաք բլիթներին:

Մտնում է ներս ու հարցնում.

— Ի՞նչ արժէ բլիթը:

— Վեցը հինգ կոպէկ:

— Վեցը հինգ կոպէկ, հա՛. ուրեմն հինգը շո՞րս կոպէկ, չորսն էլ երեք կոպէկ, երեքը երկու, երկուսը մէկ, իսկ մէկը անփող: Մէկը ինձ հերիք է. տւէք ինձ մէկը:

1) Տղան բլիթը ստացան:

2) Ծիշտ էր նրա հաշիւը:

## 10. Փոքրիկ խանութպանը

— Տատիկ ջան, արի խաղանք, — խնդրում էր փոքրիկ երևանդը:

— Լաւ, խաղանք, — համաձայնեց տատիկը.

— Խանութ խաղանք, հա՛, տատիկ:

— Լաւ, խանութ խաղանք:

Ու երևանդը վազեց, քաշ տւաւ մի երկու աթոռ, շարեց իրար կողքի:

— Էս սեղանը:

Վրան դարսեց տուփեր, գրքեր, լրագիրներ, քրոջ տիկնիկը, իր հողը, ուրիշ խաղալիքներ, էլի տուփեր, էլի գրքեր, մի երկու հատ էլ շիշ, իր խնձորը, որ դեռ չէր կերել, յետոյ իր փոքրիկ գրչահատը:

Խանութը պատրաստ էր:

Վազեց կողքի սենեակից բերաւ տատիկի մեծ գունաւոր թաշկինակը, կապեց առաջը գոգնոցի պէս, մի մեծ մատիտ անց կացրեց ականջի ետև ու կանգնեց խանութի առաջ:

— Էս կողմը համեցէք, էս կողմը համեցէք, ո՞վ է ուզում



լաւ խնձոր, կախէթի գինի, կարմիր բողկ, պան, պան, պան, պան:  
 —Շաքար ունե՞ս, խանութպան ախպէր,—հարցրեց տատիկը:  
 —Ինչքան բէֆղ ուզի, տիկին,—պատասխանեց խանութ-  
 պանը:


—Լաւ. մի հինգ արշին տո՛ւր.

Փոքրիկ խանութպանի ծիծաղն եկաւ:

—Ներեցէք, տիկին, մենք շաքարը արշինով չենք ծախում,

—ասաւ նա քաղաքավարի կերպով:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:



—Փունտով:

Փունտով: Հա, ճիշտ որ,—ասաւ տատիկը:—Դէհ, խնդրեմ,  
 ինձ հինգ ֆունտ շաքար տուր, երկու ֆունտ էլ գինի:

—Ներեցէք, տիկին,—ժպտաց խանութպանը.—մենք գինին  
 ֆունտով չենք ծախում:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:

—Գինին ծախում ենք շիշով:

—Շիշով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երկու շիշ գինի տուր,

տասը շիշ էլ ձու:

Փոքրիկ խանութպանը էս անգամ արդէն փոթկաց:

—Ներեցէք, տիկին, մենք ձուն շիշով չենք ծախում:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:

—Ձուն ծախում ենք հատով:

—Հատով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ տասը հատ ձու տուր,  
 երեք հատ էլ կաթ:

—Ներեցէք, տիկին, կաթը մենք հատով չենք ծախում:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:

—Կաթը ծախում ենք բաժակով:

—Բաժակով: Հա, ճիշտ որ: Դէհ, ինձ երեք բաժակ կաթ  
 տուր, վեց բաժակ էլ լուցկի:

Երևանը ծիծաղու թուլանում էր:

—Ներեցէք, տիկին, մենք լուցկին բաժակով չենք ծախում:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:

—Լուցկին ծախում ենք տուփով:

—Տուփով: Հա, ճիշտ որ: Այսօր ի՞նչքան բան սովորեցի:  
 Դէհ, ինձ վեց տուփ լուցկի տուր, չորս տուփ էլ կարմիր բողկ:

—Ախար, տիկին,—ծիծաղում էր խանութպանը.—ո՛վ է

լսել՝ բողկը տուփով ծախեն:

—Բաս ի՞նչով,—հարցրեց տատիկը:

—Բողկը, բողկը...,—կրմկրմաց խանութպանը, ու չիմացաւ

թէ ինչով ծախի իր բողկը:

Դուք գիտե՞ք՝ ինչով են ծախում բողկը:

## 11. Ծիրաններ

Սեղանի վրա դրած էր մի դամբիւղ ծիրան:

—Ձեռք չըտաք,—ասաւ հայրիկը,—ճաշից յետոյ միասին  
 կուտենք:

Փոքրիկ Գրիգորը սեղանի շուրջը պտտւում էր: Տանե-



ցիք դուրս գնացին թէ չէ, մի ծիրան թոցրեց ու թարուն կե-  
րաւ:

Ճաշի ժամանակ հայրիկը հարցրեց:

— Երեխէք, ձեզանից մէկն ու մէկը հօ ծիրան չի՞ կերել:

— Ոչ, հայրիկ, — կանչեցին բոլորը միաբերան:

Գրիգորն էլ թէև կարմրեց, բայց նոյնպէս ասաւ «ոչ»:

— Լաւ է որ այդպէս է, — ասաւ հայրիկը, — թէ չէ այս ծի-  
րանը մի այնտեսակ կորիզ ունի, որ՝ ով ուտի, անպատճառ  
կը հիւանդանայ:

Գրիգորը գունատեց ու կանչեց:

— Չէ, հայրիկ, ես կորիզը չը կերայ, պատուհանից դուրս  
զցեցի:

Հէնց այդ կորիզն էր, որ հայրիկը տեսել էր պատուհանի  
տակ:


Ինչ ասին Գրիգորին եղբայրներն ու քոյրերը, ինչ ասաւ հայրիկը:

Ա ո ա ծ . — Գող-սիրտը դող:

## 12. Փիսօն

Փիսօն, փիսօն մլաւան,  
Թաւրիզ թողեց, փախաւ վան,  
Լեզուն թաթիան, երկար պոչ,  
Ինչ որ ուզեց, ասին՝ ոչ:

Փիսօն գնաց գողէգող,  
Փորը դատարկ, սիրտը դող,  
Գունչը մեկնեց կովկթին,  
Շերեփն իջաւ ճակատին:



1) Ինչն էին փիսօնն ծնծում:

2) Ինչն էր փիսօնը գողանում:

3) Ապա էլ ինչն էին փիսօնին պահում:

## 13. Սուտասանը

1.

Լինում է, չի լինում մի թագաւոր: Այս թագաւորը իր  
երկրումը յայտնում է:

«Ով այնպէս սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագա-  
ւորութեան կէսը կը տամ նրան»:

Գալիս է մի հովիւ: Ասում է:

— Թագաւորն ապրած կենայ, իմ հայրը մի դազանակ ու-  
նէր, որ այստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

— Կը պատահի, — պատասխանում է թագաւորը: — Իմ պապն  
էլ մի չիբուխ ունէր: մի ծայրը բերանին էր դնում, միւս  
ծայրը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախօսը գլուխը քորելով դուրս է գնում:

2.

Գալիս է մի դերձակ: Ասում է:

— Ներողութիւն թագաւոր, ես վաղ պիտի  
գայի, ուշացայ: Երեկ շատ անձրև եկաւ, կայ-  
ծակները տրաքեցին, երկինքը պատուեց, գնա-  
ցել էի կարկատելու:

— Հա, լաւ ես արել, — ասում է թագա-  
ւորը, — բայց լաւ չէիր կարկատել: այս առաւօտ էլ մի քիչ  
անձրև թափւեց:

Սա էլ է դուրս գնում:

2.

Ներս է մտնում մի արքայի գիւղացի, կոտը կռնատակին:

— Դ՞ն է ինչ ես ուզում, այ մարդ, — հարցնում է թագաւորը:

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

— Մի կոտ ոսկի՞, — զարմանում է թագաւորը: — Սնու ես  
ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

— Թէ որ սուտ եմ ասում, թագաւորութեանդ կէսը տուր:

— Չէ, չէ, ճշմարիտ ես ասում, — խօսքը փոխում է թա-  
գաւորը:





—Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

1) Թագաւորն ինչ արաւ:

2) Բանին ստախօս կայ այս հերիաթում՝ եւ ամենից շատ ստախօտողը ո՞վ է:

Հանելուկ. — Գորգը թափ տալ չի լինի,  
Ոսկին համրել չի լինի:

### 14. Դասին

Ամբողջ դասարանը լուռ գրում էր: Կսւում էր միայն գրիչներին ճոճոցը, երբեմն էլ ուսուցչի ձայնը, որը մէկին-միւսին ուղղում էր:

Սեղրակը գրիչը մասնների մէջ ամուր հուպ էր տալիս ու շատ էր աշխատում որ գծերը ուղիղ դուրս գան:

Բայց նրա գլուխը աւելի ու աւելի կռանում էր, մատները աւելի դանդաղ էին շարժւում, ուսուցչի ձայնն էլ կամաց կամաց հեռանում էր. կարծես ուրիշ սենեակից գալիս լինէր:

Ու նրան այնպէս թւաց թէ ինքը տանն է ու ցոյց է տալիս մայրիկին իր գրածը. «տես, ինչպէս գեղեցիկ է, ինչպէս ուղիղ»: Մայրիկն էլ գովում է ու շոյում նրա գլուխը:

Յանկարծ աչքերը բաց արաւ ու նայեց դէս ու դէն: Ընկերները դադարել էին գրելուց և բոլորն էլ ծիծաղելով իրեն էին մտիկ անում:

Սեղրակը վախեցած վեր թռաւ և ուղղում էր լաց լինի, բայց ուսուցիչը քաղցր ժպտում էր ու ասում.

—Քունդ տարաւ, համ, յոգնեցի՞ր: Ոչինչ, այս բոպէիս գանգը կը տան: Կը վազվզես, բունդ կը փախչի:

1) Սեղրակի քունը ինչո՞ւ տարաւ:

2) Քունն ինչի համար է:

3) Սեղրակը ինչո՞ւ երազում տեսաւ որ մայրը շոյում է նրա գլուխը:

Առաձներ. — 1) Աշխատողը անօթի չի մնայ:

2) Աշխատանքը սարեր կը հուսասարի:

Հանելուկ. — Միպտակ դաշտեր, սև-սև սերմեր. ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ:

### 15. Նապաստակն ու կրիան



— Ինչ դանդաղաշարժ ես, — ասաւ մի օր նապաստակը կրիային. — Իսկ ես՝ տեսնում ես, ինչպէս եմ վազում:


— Դէ որ այդպէս է, արի գրագ գանք, — պատասխանեց կրիան. — Տեսնենք՝ ո՞վ աւելի շուտ կը հասնի այն կաղնի ծառին:

— Ի հարկէ ես, — ասաւ նապաստակը ու վազեց: Կէս ճանապարհին ինքն իրան ասաւ.

— Ես կը հասնեմ, երբ ուղում է լինի: Մի քիչ դեռ բնեմ: Ու դաշտումը ձգւեց քնեց:

Իսկ կրիան դանդաղ գնում էր հա գնում՝ դէպի կաղնի ծառ: Մին էլ նապաստակը զարթնեց ու վազեց դէպի ծառը. հասաւ, տեսաւ՝ կրիան արդէն ծառի տակին է:

Ինչո՞ւ դանդաղաշարժ կրիան գրագը տարաւ:  
Առաձ. — Պարծեցողը պարկը կը մանի:



### 16. Չուրր փախաւ

Տանտիկինը ջուրը լցրեց կաթսայի մէջ, դրաւ կրակին: Քանի կաթսան տաքացաւ, ջուրը սկսեց շոքել, անհան-



գստանալ: Սիրտը նեղացաւ, շուռ ու մուռ եկաւ, տակն ու վրա եղաւ: Վեր-վեր էր թոչոււմ, բըլթբըլթոււմ էր, մըրթմըրթոււմ էր, փշտացնում էր:

Կուռում էր ամանի հետ. թքում էր, հրում, ժած էր տալիս, որ կրակից շուռ տայ նրան ու ինքն ազատուի: Չը կարողացաւ: Տեսաւ՝ կաթսան շատ պինդ է նստել կասկարային. աւելի բարկացաւ, փրփրեց, վեր կացաւ, սկսեց գոլորշի դառնալ ու փախչել դէպի վեր:

Լաւ է որ տանտիկինը վրա հասաւ:

- 1) Ի՞նչ կը լինէր, եթէ տանտիկինը վրա չը հասնէր:
- 2) Գոլորշին ո՞ր պիտի փախչէր:
- 3) Եթէ երկնքում գոլորշի շատ է հուսաբում, ի՞նչ է դառնում:

Հ ա ն ե լ ու կ. — Քանի կարեւ՝ կ'երկարի, քանի տաշեմ՝ կը հաստանայ:

## 17. Ամպի երեխաները

Ամպը ունի չորս երեխայ, չորսին էլ լաւ էր ճանաչում:

Մեծը նա է, որ գալիս ծեծում է մեր լուսամուտը և այնպիսի ազմուկ է բարձրացնում մեր տանիքի վրա: Երբեմն էլ ուղղակի գժոււմ է, թափւում, թափւում, գնում է լցւում գետերը. նրանք էլ վարարում, ափերից դուրս են գալիս ու ամեն ինչ տակովը անում: Թէ չէ, ինքը վատ չէ. բնդհակառակը, այնպէս սիրում է ծառն ու կանաչը, իջնում գովացում է ծարաւ ծաղիկները, շուր է տալիս չորացած հողին:

Սրա քուրիկը մի ճերմակ աղջիկ է: Յուրտերը գալիս են թէ չէ, վրա է հասնում, փռում է իր փափուկ վերմակը մերկ անտառների ու մերկ դաշտերի վրա, որ չը մրսեն փոքրիկ սերմերը հողի տակ:

Բայց ինչ շար է նրա միւս եղբայրը: Գալիս է միշտ իր նման մի անպիտան քամու հետ, իբրև թէ հանաք է անում,


Շարդում, փշրում է ինչ որ պատահի—ապակի, ծառ ու ճիւղ, փշացնում է խոտ ու արտ:

Ամպի երեխաներից ամենից փոքրիկը մի քնքուշ աղջիկ է, Յօղիկը, նա, որ գարնանը ամեն գիշեր մարգարիտ է շարում ծառերի, ծաղիկների ու խոտերի վրա, իսկ ձմեռը, ցրտին գալիս է մեր լուսամուտին գեղեցիկ կաթնագոյն պատկերներ է քաշում սառած մատիկներով:

Ահա ձեզ ամպի չորս երեխաները—Անձրևը, Չիւնը, Կարկուտն ու Յօղիկը: Չէ՞ որ ես ասում էի՝ չորսին էլ լաւ ճանաչում էր:

Այս չորսից ամեն սէկը տարայ ո՞ր եղանակին է անցի լինում:

## 18. Աշուն վերջը



Սարի լանջին,  
Մէգի միջում  
Խոխոջում է  
Ու տըրտընջում  
Ձուրը բարակ,  
Ձուրը տըխուր.  
—Վաշ-վիշ, վաշ-վիշ,  
Ո՛ւր կորան, ո՛ւր,  
Տերև ու խոտ,

Վարդը շաղոտ,  
Սարւորն ուրախ,  
Սըրինգ ու խաղ:  
Շուրջըս դատարկ,  
Շուրջըս տըխուր...  
Վաշ-վիշ, վաշ-վիշ,  
Ո՛ւր կորան, ո՛ւր:



## 19. Եկեղեցին կորել է

Մա ի՞նչ բան է, ո՞ւր է մեր դիմացի եկեղեցին: Ո՞ւր է մեր եկեղեցին իր սուր գմբեթով:

—Մայրիկ, մայրիկ, եկ տես, էս գիշեր քանդել են մեր եկեղեցին, եկեղեցին չըկայ, կորել է:

Բայց մայրիկը ուշանում է. խոհանոցում գործ ունի, կաթն է տաքացնում, որ փոքրիկ Արփիկը խմի ու վնայ դպրոց:

Մա ի՞նչ զարմանալի բան է: Մօտիկ տներն անգամ հազիւ են երևում, ցածր, փողոցում, մարդիկ շտապ շտապ իրենց գործին են վազ տալիս, բայց ճանաչել չի կարելի, կարծես ծխի միջով են գնում:

Արփիկը էլ չը համբերեց ու վազեց խոհանոց:

—Մայրիկ, մայրիկ, մեր եկեղեցին այրել են:

—Ի՞նչեր ես խօսում:

—Հապա, այրել են: մեր եկեղեցին էլ չը կայ, իսկ փողոցը լիքը ծուխ է: Եկ տես:

Իսկ մայրիկը հանգիստ իր գործն էր շարունակում ու սրտանց ծիծաղում էր:

—Ինչո՞ւ ես ծիծաղում, մայրիկ:

—Ի՞նչ գեռ մառախուղ չէ՞ս տեսել, ազդիկս. դա մառախուղ է:

—Մառախուղ:

Մառախուղը ամպից ինչով է զանազանում:

Ա. ո. ա. ծ. — Ամպի գոռալը անձրևի նշան է:



## 20. Խօսող ձուկը

1.

Լինում է չի լինում մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար: Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, ու նրանով ապրում են ինքն ու իր կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակտարը գետափին նստած՝ նայում է նայում էս սի-



րուն ձկանն ու միտք է անում:

—Տէր Աստուած, ասում է, սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՛ սա էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախութիւն կամ ցաւ է պզում՝ թէ չէ...

Հէնց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում:

—Էսի, ասում է, մարդ-ախպէր: Ընկերներիս հետ ես խա-



դում էի գետի ալիքների մէջ: Ուրախութիւնից ինձ մոռացայ ու անզգուշ ընկայ ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողը ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են: Ես էլ, տեսնում ես, ինչպէս եմ տանջւում: շունչս կտրում է ջրից գուրս: Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպէս եմ ուզում... Եկ խեղճ արի, ազատ արա ինձ, բաց թող, բաց թող գնամ...

Էնպէս էր ասում ցած, շատ ցած ձէնով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով:

Չարմանում է աղքատ շալակտարը. մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չը լինի քու ծնողը: Թող չը տխրեն քու ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա:

— Տօ ախմախ, ասում է, ես էստեղ ջրի մէջ թրջւելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ շուրը գցում... Դէ գնա կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. գնա սովից մեռի:

Չեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

— Հիմի ես ո՛ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ... — տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դէպի տուն:

2.

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դէմը դուրս է գալի մի Վիշապ՝ առաջը մի գեղեցիկ կով:

— Բարի օր, ախպէրացու, էտի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում, — հարցնում է Վիշապը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թէ ինչպէս հիմի մնացել է անզոր, անճար, ու չի իմանում թէ ինչպէս պէտք է ապրեն ինքն ու իր կնիկը:

«Լսի, բարեկամ, ասում է Վիշապը: Էս կաթնատու կովը ես ձեզ կը տամ երեք տարւան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տայ, որ ինչքան ուտէք, կէսն էլ մնայ: Տար, կըթեցէք, կերէք, քէֆ արէք:

«Երեք տարին լրացաւ թէ չէ, հէնց առաջին գիշերը կը գամ ձեզ հարց կը տամ: Թէ հարցիս պատասխանեցիք — իմ կովը ձեզ լինի, թէ չէ — երկուսիդ էլ ուտելու եմ: Համաձայն ե՞ս»:

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք, մտածում է աղքատը. կովը կը տանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարւայ լրանայն էլ Աստուած ողորմած է: Մի տեղից մի դուռը կը բացւի, կամ գուցէ հէնց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

— Համաձայն եմ, ասում է ու կովն առաջն անում, տանում տուն:

3.

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում թէ ինչպէս անցաւ երեք տարին — և անա հասնում է նշանակած օրը, որ Վիշապն էն գիշեր պիտի գայ:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թէ ինչ պատասխան տան Վիշապին, կամ ով գիտի՝ ինչ կըհարցնի նա. ով կիմանայ Վիշապի միտքը:

— Այ թէ ինչ դուրս կը գայ, երբ մարդ Վիշապի հետ գործ բռնի... Վիշապի հետ հաշիւ ունենայ... Վիշապից լաւութիւն ընդունի... — հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անց կացածն անց էր կացել, էլ հնար չը կար: Իսկ զարհուրելի գիշերը արդէն վրա էր հասնում:

Էս ժամանակ նրանց մօտենում է մի անծանօթ երիտասարդ:

— Բարի իրիկուն, ասում է, ճամփորդ մարդ եմ. մուխ



ընկնում է, ես էլ յոգնած եմ, հիւր չէ՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

—Ընչի չէ, ճամփորդ ախպէր, հիւրն Աստուծո՛ւ մարդն է: Բայց մեզ մօտ վտանգաւոր է էս գիշեր: Մենք Վիշապից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք ուտենք, երեք տարուց ետը գայ մեզ հարց տայ. թէ պատասխանենք,— կովը մեզ լինի, թէ չէ—մեզ ուտի: Հիմի ժամանակը լրացե է, էս գիշեր պիտի գայ, ու մենք էլ չը գիտենք թէ ինչ պատասխան տանք: Եթէ մեզ ուտի—մենք ենք մեղաւոր, վայ թէ քեզ էլ ուտի մեզ հետ...

—Բան չը կայ, որտեղ գուր՝ էնտեղ էլ ես,—պատասխանում է օտարականը:—Եւ եթէ չը գիտէք՝ ինչ պատասխան տաք, երբ Վիշապը գայ, ինձ թողէք, ես նրա պատասխանը կը տամ:

Համաձայնում են: Հիւրը մնում է:

Մին էլ կէս գիշերին Վիշապը գալիս է գուռը զարկում:

—Եկել ե՛մ:

—Ես էլ եմ եկե՛լ, պատասխանում է ներսից հիւրը:

—Ո՞րտեղից ես եկել:

—Ծովի էն ափից:

—Ընչո՞վ ես եկել:

—Կաղ մոծակը թամբել եմ, նստել՝ եկել:

—Ուրեմն ծովը պտիկ է եղել:

—Ի՞նչ պտիկ. արծիւը չի կարող մի ափից միւսը թռչել:

—Արծիւը ճուտ է եղել:

—Ի՞նչ ճուտ. թևերի շւաքը քաղաք է ծածկում:

—Քաղաքը գուցէ շատ փոքրիկ է:

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծէրից միւսը չի հասնի:

—Նապաստակը ձագ է գուցէ:

—Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք գուրս կը գայ,

գլխարկն ու տրեխն էլ աւել:

—Մարդը գուցէ թղուկ ես ասում:

—Ի՞նչ թղուկ. ծնկան ծէրին արլորը որ ծուղրուղու է կանչում ձէնը ալանջը չի հասնում:

—Ուրեմն խուլ է եղել:

—Ի՞նչ խուլ. սարում պախրէն որ խոտ է պոկում նա լսում է:

Վիշապը մնում է կապած, մոլորած, էլ չի իմանում ինչ ասի, քաշում է կորչում:

Երիտասարդ հիւրն էլ վեր է կենում, որ գնայ, մարդ ու կին առաջը կտրում են:

—Ով ես դու, անծանօթ բարերար, անուղ ասա, որ թէ լաւութիւնդ կորչի ու չը կարողանանք ետ վճարել, գոնէ իմանանք թէ ում ենք օրհնելու,—խնդրում է աղքատը:

—Լաւութիւնը՝ արա ու թէկուզ ջուրը գցի, երբէք չի կորչի, պատասխանում է հիւրը: Ես հէնց էն ձուկն եմ, որի կեանքը դու խնայեցիր ու նրա համար էլ զրկեցիր քու ապրուստից...

Ասում է ու չքանում նրանց առաջից:

## 21. „Պօղոս-Պետրոս“

1.

Վաղո՛ւց, երբ մօտ էր երկրին երկինքը  
Ու լրսում էր դեռ մարդկանց Տէր-Ինքը,  
էն լաւ ժամանակ երկու մանուկներ  
Ունէին մի շար, մի անսիրտ խորթ մէր:  
—Կորէք, գընացէք, աշխատանք արէք,  
Աշխատանք արէք ու եկէք կերէք.  
Ի՞նչ էք վեր թափել անգործ ու անբան,  
Հասած տրղերք էք հինգ-վեց տարեկան...

Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,  
Ճիպտաներ տըլաւ, զրրկեց հորթերը:  
Անհանգիստ հորթեր, ամառուան շոգ օր.  
Կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:  
Նրբանց ետևից՝ լայով, հեալով,  
Փոքրիկ որբերը՝ քարէքար գալով  
Վագ էին տալի անտառի միջում,





Վազէին տալի ու իրար կանչում:

—Պօղոս, գրտար:

—Չէէ:

—Պետրոս, գտար:

—Չէէ:

—Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...

2.

Շատ որ ման եկան՝ խեղճերն  
յոգնեցին,

եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին.

—Նանի, այ նանի, կորան հորթերը...

—Վայ, գետինն անցնէք, ճրչաց խորթ  
մէրը,

Թող դուք կորչէիք հորթերի տեղակ  
Անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ:  
Մի արջ պատահէր, մի գազան, մի գէլ,  
Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...  
Դէ ետ գընացէք, գնացէք, կորէք,  
Մինչև չըգտնէք հորթերը բերէք՝  
Աչքիս չերևաք, այ աչքիս փըշեր,  
Թէ չէ կըսպանեմ ես ձեզ էս գիշեր...

Ու ճիպտան էլ ետ իրենց թաթերին,  
Յոգնած ու սոված, արցունքն այտերին,  
Փոքրիկ որբերը՝ անտառի միջում,  
Գիշերւան կիսին լալիս են, կանչում.

—Պօղոս, գտար:

—Չէէ:

—Պետրոս, գտար:

—Չէէ:

—Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ,

Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ:

3.

Անտէր հորթերը չըկան ու չըկան:

Ճարները կըտրած՝ խեղճերը եկան,

Լալով չորեցին.

—Տէր Ասուած, ասին,

Ի՛նչ կըլնի, գըթաս՝

Գոնէ թևեր տաս,

Թևեր տաս՝ թըռչենք,

Թըռչենք ու կորչենք,

Որ էլ չըտեսնի մեզ մեր խորթ մէրը,

Մինչև որ գըտնենք կորած հորթերը...

Չէնց ասին-չասին անմեղ բերանով,

Ասուած որոտաց իր գըթոտ ձայնով.

—Ահա ձեզ թևեր, սիրուն երեխէք,

Թըռչուններ դառէք, թըռած ման եկէք,

Որ էլ չըտեսնի ձեզ ձեր խորթ մէրը,

Մինչև որ գըտնէք կորած հորթերը:

Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,

Ծեղն ու ծըղօտը արէք անկողին,

Ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,

Երբոր դատարկուն եղաք ձեր տանից...

4.

Այսպէս վերևից հէնց կանչեց Ասուած,

Փոքրիկ որբերը փոխեցին յանկարծ

Ու թևեր առան,

Թըռչուններ դառան,

Ու թևեր առած՝

Թըռչուններ դառած





Դեռ մինչև էսօր,  
Ընկած սար ու ձոր,  
Ծըլում են, մընչում,  
Մէկ մէկու կանչում.

—Պողոս, գտա՛ր:

—Չէ՛է՛:

—Պետրոս գտա՛ր:

—Չէ՛է՛:

—Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ,

Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ:

## 22. Գիտե՛նք

Փամանակով լինում են մի մարդ ու մի կնիկ:

Սրանք մի վատ սովորութիւն են ունենում—ուրիշի խօսքին երբէք մինչև վերջը ականջ չեն դնում, ասում են՝ «գիտենք, գիտենք»:

Մի օր սրանց մօտ մի առևտրական մի խալաթ է բերում:

—Ով որ,—ասում է,—էս խալաթը հագնի ու մի կոճակը կոճկի, գետնից մի արշին կը բարձրանայ, երկուսը կոճկի՝ մինչև երկնքի կէսը կը թռչի, երեքը կոճկի՝ հօ երկինք կը վերանայ:

Մարդ ու կնիկ չեն էլ հարցնում թէ էլ ինչպէս պէտք է աշխարհ վերադառնան, ասում են՝ «գիտենք, գիտենք»:

Մարդը խալաթը հագնում է, բոլոր կոճակները մէկ անգամից կոճկում ու թռչում երկինք: Իսկ կնիկը վազում է ու ձայն տալիս:

—Տեսէք, տեսէք, մարդս ծտի պէս թռչում է:

Շարունակ երկնքին նայելով վազում է վազում, մին էլ թրը՛մփ, ընկնում է մի անդունդի մէջ:

էտ անդունդի յատակին մի գետ է հոսում, ընկնում է




էտ գետի մէջ:

Ասում են՝ մարդը երկնքում արծիւ է դառնում, իսկ կնիկը գետում ձուկը:

էլի լաւ է, որ էսպէս վերջացաւ դրանց բանը:

Ուրիշ ինչ կերպ կարող էր վերջանալ բանը:

Ա. Ո. Ս. Ս. — Իմաստունի հետ քար քաշի, յիմարի հետ փլաւ մի ուտի:



## 23. Կացին ախպերը

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկաւ մի գիւղ: Տեսաւ, այս գիւղի մարդիկ ձեռով են փայտ կտրատում:

—Ախպէր, ասաւ. ինչո՞ւ էք ձեռով փայտ անում. միթէ կացին չունէք:

—Կացինն ի՞նչ բան է,—հարցրին գիւղացիք:

Մարդը իր կացինը գօտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց միւս կողմը: Գիւղացիք այս որ տեսան, վազեցին գիւղամէջ, ձայն տւին իրար.

—Տօ, եկէք, տեսէք, կացին ախպէրը ինչ արաւ:

Գիւղացիք հաւաքւեցին կացնի տիրոջ վրին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տւին ու կացինը ձեռիցն առան:



Կացինը առան, որ հերթով կոտորեն իրենց փայտը:  
Առաջին օրը տանուտէրը տարաւ: Կացինը վրա բերաւ թէ  
չէ, ոտը կտրեց: Գոռալով ընկաւ գիւղամէջ:

—Տօ, եկէք, եկէք, կացին ախպէրը կատաղել է, ոտս կծեց:  
Գիւղացիք եկան, հաւաքեցին, փայտերն առան, սկսեցին  
կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան բան չը դառաւ, փայտերը  
կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացաւ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջաւ,  
եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին.

—Վայ, տղերք, կացին ախպէրը բարկացել է, տեսէք՝ ոնց է  
կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կը բերի: Ի՞նչ  
անենք:


Մտածեցին, մտածեցին, ու վճռեցին տանեն բանտը զցին:

Տարան զցեցին տանուտէրի մարագը: Մարագը լիքը դար-  
ման էր. զցեցին թէ չէ՝ կրակն առաւ, բոցը երկինք բարձրա-  
ցաւ:

Գիւղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից թէ՛ «եկ,  
Աստծու սիրուն, կացին ախպօրը բան հասկացրո՞ւ»:

- 1) Կացնի տէրը որ եկաւ, ի՞նչ արաւ:
- 2) Փայտ կտրելու ու ջարդելու համար ուրիշ էլ ի՞նչ գործիք գտես:
- 3) Ի՞նչից են շինած այդ գործիքները,

24. Ուրագ ու աղոց



Մի լինի ուրագի պէս,  
Միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ.  
Այլ եղիր սըղոցի պէս,  
Մին դէպի քեզ, մին դէպի մեզ:



Խորէնի հայրիկը մշակութիւն  
էր անում քաղաքում: Մի իրի-  
կուն շատ յոգնած վերադարձաւ  
տուն: Մէջքը ցաւում էր, ոտ-  
ներում էլ ուժ չէր մնացել:  
Հայրիկը անկողին մտաւ ու մի  
քանի օր չէր կարողանում վեր  
կենայ, գնայ մշակութիւն անի:

Ո՞վ պէտք է ընտանիքը պահի,  
նվ պէտք է կերակրի վեց հոգուն:  
Մայրիկը վերջին արասին տա-  
րաւ այսօր ու տւաւ հացի: Իսկ  
վաղն ի՞նչ պիտի ուտեն:

Խորէնը մտածում էր ամբողջ  
գիշերը:

Առաւօտը վաղ, երբ ամենքը  
քնած էին դեռ, և՛ հայրիկը, և՛  
մայրիկը, և փոքրիկ քոյրերն ու

եղբայրները, Խորէնը հագաւ հօր ոտնամաները, գլխին դրաւ  
փափախը, ուսը զցեց հօր փալանը ու գնաց կանգնեց քաղաքի  
հրապարակում, որտեղ կանգնում էին մշակները:

- 1) Խորէնը ինչու էր կանգնել հրապարակում:
- 2) Ի՞նչ էր մտածում թէ իրիկուն ինչպէս կը վերադառնայ տուն:
- 3) Խորէնին կը վարձէին թէ՛ չէ:

Ա. ա. ծ. — Ամեն օր կուժը ջուր չի բերի:  
Շ. ու. տ. ա. ս. ե. լ. ո. կ. — Մեր տունը երէկ ցերեկը երեք երէց եկան,  
երէկ ցերեկ գնացին:  
Ջեր տունն էլ երէկ ցերեկ երեք երէց եկան, երէկ ցերեկ  
գնացին:



26. Եռնի ու կատուն



I  
 ժամանակով կա-  
 տուն ճոն էր,  
 Եռնն էլ գրվին  
 գրգակ շունէր,  
 Միայն, գիտեմ ոչ՝  
 որդիանց որդի  
 ձանկել էր մի գա-  
 ռան մորթի:  
 Եկաւ մի օր, ձմեռ-  
 նամըտին,  
 Կատուի կոշտը տա-  
 րաւ մորթին:  
 — Բար աջողում,  
 ուստա Փիսօ,

Գլուխըս մըրսեց, ի սէր Աստծոյ,  
 Ան էս մորթին ու ինձ համար,  
 Մի գրգակ կարի գրվիս յարմար:

Վարձիդ համար միամիտ մընան,  
 Համա-համա շատ շուշանայ:  
 — Աչքիս վըրա, բեռի Քուշի.  
 Մի գրգակ ա, հօ մի քուրք չի.  
 Քու թանգագին խաթեր համար  
 Ուրբաթ օրը համեցէք տար:  
 Փողի մասին աւելորդ ա,  
 Մեր մէջ խօսելն էլ ամօթ ա.  
 Ի՛նչ մեծ բան ա, տօ հէր օրհնած,  
 Միայն, միայն մի գրգակի վարձ:  
 Ուրբաթ օրը բեռի Քուշին՝  
 Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին



Թափ թափ տալով ծանդըր ու մեծ  
 Ուստա Կատուի շէմքում կանգնեց:  
 — Ուստէն ո՛ւր ա... փափախս ո՛ւր ա...  
 «Մի քիչ կանցի—հրէս կերևայ»:

II  
 Ուստէն եկաւ քուրքը հագին,  
 Եանը տեսաւ, բեխի տակին  
 Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,  
 Ու մուշտարու վըրա թընդաց.  
 — Ցուրտը տարաւ... վան տընաշէն,  
 Չես թող անում մի շունչ քաշեն.  
 Հեշտ բան հօ չի՞, հըլա նոր եմ  
 Ցրրցամ տըլել, թէ որ կարեմ:  
 — Իէ հէր օրհնած, էտէնց ասա,  
 էտ բարկանալդ էլ ընչիս ա:  
 Փող եմ տըլել, վախտին կարի,  
 Թէ չէ՝ ասան էգուց արի:  
 Համ ասում ես, համ չես կարում,  
 Համ խօսում ես, վըրէս գոռում.  
 Համ, համ, համ, համ,  
 Քանի՞, ախպէր, գընամ ու գամ...  
 Ասաւ Քուշին ու նեղացած  
 Վերադարձաւ գլուխը բաց:

III  
 Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.  
 էս անգամը դիպան իրար.  
 էլ անպատիւ, պետոր<sup>1)</sup> խօսքեր,  
 էլ հին ու նո՛ր, էլ հէրն ու մէ՛ր,  
 էլ գող Փիսօ՛, էլ քաշալ Եռն...  
 Բանը հասաւ դիւանբաշուն<sup>2)</sup>:


<sup>1)</sup> Անարգ: <sup>2)</sup> Դատաւոր:



Շունը մինչև գրնաց, եկաւ,  
 Ուստա Կատուն կոտորն ընկաւ,  
 Գրբուխն առաւ ու մի գիշեր,  
 Հայդէ, կորաւ. էն կորչիւն էր...

IV

էն օրւանից մինչև օրս էլ  
 Շունն էս բանը չի մոռացել.  
 Մըտքում հլա դեռ պահում է.  
 Որտեղ Կատին պատահում է,  
 Վեր է թրոշում, վըրա վազում,  
 Իրեն մորթին ետ է ուզում,  
 Իսկ սևերես Կատուն յանկարծ  
 Ետ է դառնում ու բարկացած  
 Փըշտացնում է. մըթամ նոր եմ  
 Ցըրցամ տըւել, թէ որ կարեմ:



27. Համրիկի աղօթքը

Իրիկուն է: Համրիկը պատրաստում է բնի: Մայրիկը  
 նրան օգնեց, շորերը հանեց ու սասաւ.  
 — Իէհ, հիմի աղօթի:  
 Երեխան չոքեց իր ճերմակ անկողնում, «Հայր մերն» սասաւ  
 ու մեծ-մեծ, պայծառ աչքերը վեր ուղղելով՝ Աստծուն  
 խնդրեց.

— Աստուած ջան, պահի հայրիկին, մայրիկին, Մուշեղին,  
 Աշխէնին, Նունիկին, Անօին, Սրտիկին, Արփիկին...

Ու կանգնեց:  
 — Էլ ո՛ւմ,— հարցրեց մայրիկը:  
 — Պապին, տատին, հօրեղբայր Վահանին, Սիգուշին, Լե-  
 ւոնին, Կուտիկին...

Սիգուշն ու Լևոնը իր ընկերներն էին, իսկ Կուտիկը իրենց  
 շունն էր:

Աղօթքը վերջացրած համարելով՝ նա ուրախ-ուրախ մտաւ  
 վերմակի տակը:

Մայրիկը ծիծաղելով նրան համբուրեց և սասաւ.  
 — Բայց դու Կուտիկի համար էլ աղօթեցիր... Չի կարելի:  
 Շան համար Աստծուն չեն աղօթի:

Երեխան յանկարծ գլուխը դուրս հանեց վերմակի տակից:  
 — Բաս Կուտիկին չը պահես, Աստուած, նրան թող...  
 Մայրիկը ծիծաղելով մին էլ համբուրեց ու դուրս գնաց:  
 Երեխան սկսեց մտածել՝ «ինչո՞ւ Աստուած չը պահի Կու-  
 տիկին, ինչո՞ւ նրան թողնի»...

Մտածեց, մտածեց, գլուխը հանեց անկողնի միջից ու  
 շըշընջաց մանկանոցի լուսթեան մէջ.

— Չէ, Աստուած ջան, չէ, Կուտիկին էլ պահի, ամա մայ-  
 րիկին չասես...

Ու նորից մտաւ վերմակի տակ:

- 1) Ինչո՞ւ մայրիկին չասես:
- 2) Ի՞նչպէս պիտի մայրիկը ասէր Համրիկին:

28. Բրդոտ խաղրակերը

Պանդոկում նստած էր արջ պար ածողը և ընթրում էր, իսկ  
 արջը կապած էր գուրսը սիւնից, մի խեղճ արջ, որ սարսա-  
 փելի տեսք ունէր, բայց ոչոքի վնաս չէր տալիս:

Պանդոկի գլխին, սենեակում խաղում էին երեք փոքրիկ



երեխաներ: Մեծը վեց տարեկան կը լինէր, իսկ ամենից փոքրը հազիւ երկու տարեկան:

Թրախկ, թրո՛ւխկ, մէկը սկսեց բարձրանալ սանդուղքով ո՞վ պիտի լինէր:

Յանկարծ դուռը լայն բացւեց, ու անազին բրդոտ արջը մտաւ ներս: Խեղճը ձանձրացել էր ներքևում կանգնելուց, կապը բացել էր, և անհա նա գտել էր սանդուղքի ձանապարհը: Երեխաները սաստիկ վախեցան, ամեն մէկը մտաւ մի



անկիւն: Արջը մօտեցաւ երեքին էլ, հոտոտեց իր լայն դնչով, բայց ոչինչ չարաւ նրանց: «Երևի սա մի մեծ շուն է», սիրտ առան երեխաները ու սկսեցին փաղաքշել:

Արջը փուկեց յատակին. փոքրիկը ընկաւ նրա վրա, թաւալ էր տալիս ու խաղում:

Խաղում էր ու իր սպիտակ գլխիկը թաղում էր արջի խիտ ու սև բրդի մէջ:

Իսկ մեծ եղբայրը բերեց իր թմբուկը և սկսեց գարկել:

Հէնց որ թմբուկը թնդաց, արջը տեղից վեր կացաւ, կանգնեց ետևի թաթերի վրա ու սկսեց պար գալ:

Մի ուրախութիւն էր ուր...

Իսկոյն երեխաներից ամեն մէկը վերցրեց մի մի հրացան, արջն էլ իր հրացանը ստացաւ, մի աւլի կոթ, որ շատ կարգին ու ամուր էր բռնում:

Հիանալի ընկեր էին գտել: Ու իրար ետևից շարւած՝ ոտները խփում էին գետնին ու գնում:

— Մէկ-երկո՛ւ, մէկ-երկո՛ւ:


Յանկարծ դուռը բացւեց ու մայրը սարսափահար կանգնեց դռան մէջ: Երեխաներից մէկը ուրախ-ուրախ գլխով արձաւ ու պոռաց.

— Մայրիկ, տես, գինուր ենք խաղում...

Հէնց այդ վայրկեանին էր, որ վրա հասաւ արջ պար ածողը:

- 1) Ի՞նչ արաւ արջ պար ածողը:
  - 2) Ի՞նչու ամենից առաջ փոքրիկը սկսեց արջի հետ խաղալ:
  - 3) Էլ ի՞նչ կենդանի գիտես, որ պար են ածում:
- Ա. ա. ծ. հ. Բ. — 1) Անուշ լեզուն օձը բնից կը հանի:  
2) Արջը խաղով եղաւ, տանձը մտքից ընկաւ:

## 29. Ամպն ու սարը



Ամպը եկաւ նստեց սարին, նստեց սարի սուր կատարին: «Լսի, պապի, ասաւ նրան, լաւ օրերըդ անցան, կորան. Խիտ, սոսկալի ցուրտ է գալի»:

Ասաւ, գնաց:

Սարը կամաց

Մտաւ սիպտակ

Վերմակի տակ:

Ինչու ծիւնը ամենից առաջ սարի գլխին է նստում:  
Ա. ա. ծ. — Աստուած սարը կը տեսնի, ձիւնը կը դնի:



### 30. Իշուկի գանգատը

1.

Այգեպանը մի էշ ունէր: Կաւ կերակրում էր, լաւ խնամում, բայց լաւ էլ բանեցնում էր: Էս մէկը իշուկին շատ դուր չէր գալիս:

Գարնանը ամեն օր այգեպանը ծաղկով ու կանաչով լիբը բթոցները բարձում էր իշուկին ու բշում էր քաղաք:


— Ի՞նչ յիմար են էս մարդիկ, — մտածում էր իշուկը ճանապարհին. — ծաղիկն էլ ի՞նչ բան է որ սիրում են: Ախ, մի ամառը գայ, պրծնենք էս անպիտան վարդերից, շուշաններից, յասմիկներից, էս սպանախից ու ծնեբեկից, էս սիբեխից ու սինդրիկից, էս բոխից ու բողկից, հանգիստ գնամ՝ քէֆիս արածեմ:

2.

Ահա և ամառը: Այգոււմ արգէն հասել էին լոբին ու բարրիջանը, սեխն ու ձմերուկը, դդումն ու վարունկը, գազարն ու բազուկը:

Էշը հազիւ էր տեղից շարժւում էս ծանրութեան տակ ամառւայ շորին:

— Ա՛խ, — տնքում էր էշը բրտինքի մէջ կորած. — Երբ է գալու աշունը, կանաչից էլ պրծնենք, բանջարեղէնից էլ ու մի ազատ շունչ քաշենք:



3.

Եկաւ աշունը: Խաղողը հասաւ, տանձ ու խնձորից կտորատոււմ են ծառերի ճիւղերը, նուռը կարմրին է տալիս, սերկելիլը դեղնին, էլ դեղձ, էլ ընկոյզ, որ մէկն ասեմ: Օտանը բթոցները բարձում էին իշուկին ու բշում քաղաք:

— Էս ի՞նչ տանջանք է, տօ, — գլուխը կախ գցած թառանջ էր քաշում իշուկը: — Գոնէ շուտով մի ձմեռը գայ, երկիրը սառչի, էս սնտէր բոյսերը չորանան, ես էլ ազատեմ, թողնեն ինձ հանգիստ ախոռում, ուտեմ ու պառկեմ:

4.

Հասաւ ձմեռը: Սարսափելի ցուրտ: Այգեպանը իշուկին բշում էր անտառ, փայտը էր կտրում, ցախ էր հաւաքում, խոիւ ժողովում, բարձում իշին ու բերում տուն:

— Ի՞նչ անիծած եղանակ է, — մրսելով ու սայթաքելով գանգատոււմ էր իշուկը. — Ամեն ինչ բար է կտրել, խոտ չըկայ, բան չը կայ: Երանի մի գարունը բացւի:

Ի՞նչպէս կը գանգատէր գիւղացու իշուկը:

Ա. Ա. Մ. — 1) Իշին հարսանիք կանչեցին, — ասաւ՝ կամ ջուրը պահաս կը լինի, կամ փայտը:  
2) Էշը որ մի տեղ ցեխն ընկաւ, էլ էն տեղովը չի անցնի:  
3) Էշն ուզեց հանաք անի՝ քացի տաւ:

### 31. Յուրտը փչեց

Յուրտը փչեց, ձմեռ սաստիկ,  
Չիւնը ծածկեց գետինը,  
Ամենայն մարդ մտաւ իր տուն  
Պատըսպարւի ցրտիցը:  
Ժամի դրոան դողդողալով  
Կանգնած է մի աղքատ կին.



Նորա հանդերձ պատառ, պատառ,

Չունի շապիկ իր հագին:

Անհամարձակ նա իր ձեռքը

Պարզում է անցկացողին—

«Ողորմութիւն արէք, պարոն,

Անտուն, անտէր աղքատին»:

Առաժ.—Ողորմութիւնը այնպէս տուր, որ շապիկդ չիմանայ:

## 32. Անտառի տնակը

1.

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում: Էն խրճիթում կրնկայ ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտհատ:

Մի առաւօտ, գործի գնալիս, կնկանն ասում է.—Այ կնիկ, էսօր բանս մինչև կէսօր չեմ վերջացնի. մեր մեծ աղջկայ հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը: Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կը վերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էն նշանովը գայ ու ճամփէն չը կորցնի:

Ճաշ է դառնում թէ չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է ճամփայ ընկնում: Բայց ծտերը, արտուտաները, սարեակներն ու դեղձանիկները շաղ տուած կորեկն արդէն վեր քաղած են լինում ու աղջիկը չի կարողանում հօր հետքը գտնի: Գնում է, գնում է ու մութը վրա է հասնում: Ծառերը շրջում, խաւարում, բուերը կանչում կորնչում, ու աղջիկը սկսում է վախենալ:

Մին էլ տեսնում է՝ հեռում, ծառերի արանքից մի կրակ է փայլփլում:

—Էնտեղ երևի մարդիկ են ապրում, գնամ նրանց մօտ մնամ էն գիշեր, մտածում է աղջիկն ու գնում էն կրակի վրա: Գնում է հասնում մի տնակի, դուռը ձեծում է:

—Ո՞վ ես, ներս արի, կանչում է ներսից մի ձայն:

Աղջիկը ներս է մտնում. տեսնում է՝ հրէս նստած մի ալևոր մարդ, գլուխը կախ արած, սիպտակ միրուքն ալիքածն իջնում է մինչև գետին: Իսկ էն կողմը մի շալ կով, մի հաւ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թէ ինչպէս է ինքը մօլորել անտառում, ու խնդրում է, որ տեղ տայ գիշերը մնալու:

Ծերունին դիմում է իր կենդանիներին.

—Միրուն հաւիկ, իմ լաւիկ,

Չալ ու նախշուն իմ կովիկ,

Եւ դու, աքլոր փահլեան,

Ի՞նչ էք ասում դուք սրբան:

Կենդանիները միասին պատասխանում են. «լմն»:

Էն ժամանակ ծերունին աղջկանն ասում է.

—Համեցէք, մեր աչքի վրա, սիրուն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը լիքը: Համեցէք, մօտեցի օջաղին, կերակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ:

Աղջիկը մտնում է խոհանոց և ճիշտ որ, ամեն բան զրանում է առատ առատ: Մի լաւ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում է պրծնում:

—Բա ես յոգնած եմ, ասում է, հիմի որտեղ քնեմ:

Էստեղ կովը, հաւն ու աքլորը պատասխանում են.

—Ողջ դրա հետ դու կերար

Ու խմեցիր, ինչ որ կար,

Մըտիկ չարիք իսկի մեզ.

Գրնա, քրնի ուր կուզես:

Էն ժամանակ ծերունին ասում է:

—Բարձրացի, սանդուղքի գըլխին մի սենեակ կայ: Էն սենեակում երկու անկողին կայ. անկողինները պատրաստի, ես էլ կը գամ կը քնենք:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները զցում, ու էլ



ծերունուն չի սպասում, ինքը պառկում է քնում:  
Մի քիչ յետոյ ծերունին գալիս է, մոմի լուսով նայում աղ-  
ջկանը ու գլուխը ժաժ տալիս: Գիշերուայ մի ժամանակ, երբ  
տեսնում է խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի  
դուռն է լինում, բաց է անում, աղջկանը թողնում ցած ու  
կրկին փակում:

2.

Փայտհատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկայ  
վրա, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

—Ես ինչ անեմ, պատասխանում է կինը, ճաշը տեղ եմ  
մեր մեծ աղջկանը զրկել: ինչպէս երևում է, ճամփէն կոր-  
ցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել դեռ:

Փայտհատը միւս օրն էլ առաւօտը վաղ վեր է կենում  
գնում անտառը: Պաաւիրում է, որ էս անգամ միջնեկ աղ-  
ջիկը տանի ճաշը:

—Էսօր հետս ոսպ կը վերցնեմ, ասում է, որ ճամփին շաղ  
տամ: Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կը տեսնի ու  
ճամփէն չի կորցնի:

Կէսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է ճամբայ ընկ-  
նում: Գնում է, գնում, ոչ մի տեղ ոսպ չի գտնում: Դու մի  
ասիլ, դարձեալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը  
ընկնում էլ նոյն ծերունու մօտ, հաց ու բնելու տեղ է խընդ-  
րում: Ծերունին դիմում է կովին, հաւին ու աքլորին:

- Միրուն հաւիկ, իմ լաւիկ,
- Չալ ու նախշուն իմ կովիկ,
- Եւ դու, աքլոր փահլեան,
- Ի՞նչ էք ասում դուք սրբան:

—Լաւ, պատասխանում են կենդանիները:  
Միջնեկ քոյրն էլ, մեծ քրոջ նման, ընթրիք է պատրաս-  
տում, ծերի հետ ուտում, խմում, կշտանում: կենդանիների

վրա ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է թէ՛ ես ճրտեղ  
պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են:

- Ողջ զրա հետ դու կերար
- Ու խրմեցիր, ինչ որ կար,
- Մըտիկ շարիր իսկի մեզ:
- Գրնա, բընի, ուր կուզես:

Հէնց նա էլ գնում է քնում թէ՛ չէ, ետեից գնում է՞ ծե-  
րունին, զլուխը թափահարում ու դարձեալ թողնում է ներքև:

3.

Երրորդ առաւօտը փայտհատը կնկանն ասում է.

—Էսօր մեր փորրիկ աղջկայ ձեռքով զըրկի ճաշը: Նա բա-  
րի է ու աղանջով: Նա ճամփէն կը գտնի, իր քոյրերի նման  
չի, որ դէս ու դէն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը զրկի:  
Լաց է լինում, ասում է. «աչքիս սև ու սիպտակը սա է մնացել,  
ի՞նչու ես ուզում սրան էլ կորցնենք մեծերի նման:

—Դու հանգիստ կաց, ասում է փայտհատը, սա կորչիլ չի,  
սա էնպէս խելօք է որ... Ես էլ էսօր հետս սիսեռ կը տանեմ  
ճամփին շաղ՝ տալու: Սիսեռը ոսպ հօ չի, նրանով ան-  
պատճառ ճամփէն կը գտնի:

Բայց երբ աղջիկը ճաշն առած անտառն է մտնում, թըռ-  
չուններն արդէն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մտնում է  
տարակուսած. չի իմանում, որ կողմը գնայ: Մտածում է,  
դարդ է անում, թէ հիմի հայրը կը սովի, մայրը լաց կը լինի...

Ման է գալի, ման, հօրը չի գտնում: Երբ մութն ընկ-  
նում է, հեռից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում  
է էն լուսի վրա: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալե-  
հեր ծերունին դարձեալ դիմում է իր կենդանիներին:


- Միրուն հաւիկ, իմ լաւիկ,
- Չալ ու նախշուն իմ կովիկ,
- Եւ դու, աքլոր փահլեան,
- Ի՞նչ էք ասում դուք սրբան:



—Լա՛ւ, պատասխանում են կենդանիները:  
Էն ժամանակ աղջիկը մօտենում է, գուրգուրում հաւին  
ու աքլորին, կովի ճակատը քորում: Ծերի պատէրով ընթրիք  
է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

—Ինչո՞ւ ես պէտք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղ-  
ցած նայեն:

Գնում է, կուտ բերում ածում հաւի ու աքլորի առջև,  
կովի համար էլ մի խորոմ խոտ:



—Կերէք, ասում է, իմ սիրելիք, այ հիմի շուր էլ կը բերեմ:  
Գնում է մի գոյլ շուր էլ բերում դնում առաջները:  
Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում, ուտում ինչ  
որ թողել էր ծերունին:

Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է.

—Ժամանակ չի՞ արդեօր, որ ամենքս էլ հանգստանանք:

Սիրուն հաւիկ, իմ լաւիկ,  
Չալ ու նախշուն իմ կովիկ,  
Եւ դու, աքլոր փահլեան,  
Ինչ էք ասում դուք սրբան:

—Լա՛ւ, պատասխանում են կենդանիները.

Մեզ հետ կերար դու միասին

Ու հոգացիր մեր մասին,

Բարի գիշեր քեզ, բարի,

Մուրազդ Աստուած կատարի:

էս աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաս-  
տում: Ծերունին գալիս է քնում: Ինքն էլ միւս մահճա-  
կալին է պառկում ու բուն մտնում հանգիստ:

4.

Գիշերուայ մի ժամանակ տունը յանկարծ դղրդում է, կար-  
ծես քանդում ու տակնուվրա է լինում: Աղջիկը վախեցած  
զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նո-  
րից:

Առաւօտը աչքը բաց է անում—ինչ է տեսնում: Տեսնում  
է՛ պառկած է մի մեծ, շքեղ զարդարած ու կահաւորած դահ-  
լիճում, շուրջը թաւիշ ու ոսկի, հարաւային փարթամ բոյսեր  
ու ծաղիկներ այրում վառում են առաւօտեան արևի ճա-  
ռագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հաւատում,  
ասում է՝ երազի մէջ եմ երևի: Էսպէս մտածելիս ներս են մըա-  
նու երեք ճոխ հագնւած ծառաներ, խոնարհ գլուխ են տալի ու  
հարցնում.

—Ի՞նչ կը հրամայէք, տիրուհի:

—Լա՛ւ, լա՛ւ, գնացէք,—պատասխանում է քնաթաթախ աղ-  
ջիկը,—հիմի վեր կը կենամ, ծերունու համար կերակուր կը  
պատրաստեմ, կովին, հաւին ու աքլորին էլ կը հոգամ:

Կարծում է, թէ ծերունին էլ արդէն վեր է կացել: Նայում  
է նրա անկողնին, տեսնում է՝ ծերունի չը կայ, տեղը պառկած  
է մի օտար, ջահել ու գեղեցիկ երիտասարդ...



Եւ անա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպէս խօսում զարմացած աղջկայ հետ.

«Աօի, սիրուն աղջիկ: Ես էս երկրի թագաւորի որդին եմ: Չար վհուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրէի անտառում, ոչ ոք էլ չը լինէր ինձ հետ, բացի իմ երեք ծառաները, նրանք էլ կովի, հաւի ու աքլորի կերպարանքով: Եւ էսպէս պէտք է մնայինք, մինչև յայտնւէր էն բարի աղջիկը, էն ընքոյշ սիրտը, որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լինէր սիրող ու կարեկից...»

«Էն աղջիկը դու եզար:

«Քու շնորհիւ էս գիշեր—կէս գիշերին, մենք ամենքս ազատեցինք կախարդանքից ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին սնակ, նորից դարձաւ սուաշւան պալատը»:

Ու կանչում է թագաւորազնը իր ծառաներին, որ գնան աղջկայ ծնողներին բերեն հարսանիքին:

—Բայց սրտեղ են իմ բոյրերը, հարցնում է աղջիկը:



—Նրանց ես փակել եմ ներքնայարկում,—պատասխանում է երիտասարդը:—Էզուց կուղարկեմ անտառը, էնտեղ ամխարարի մօտ ծառայեն ու էնքան մ'նան, մինչև որ կը դառնան աւելի բարի ու կը սովորեն մտածել կենդանիների մասին:

### 33. Եռնի ու նապաստակը

Նապաստակը վազում էր, շունն էլ ետևից, և այնպէս արագ էր վազում, որ շունը չէր կարողանում համնի:

—Է՛յ, բարեկամ, էտ փոքրիկը բեզնից լաւ է վազում,—ասաւ շան տէրը:

—Ի հարկէ,—պատասխանեց շունը.—ես վազում եմ փոքրիս համար, նա վազում է իր կեանքի համար:



### 34. Ծաղիկները

—Ո՞ւր գնացին ծաղիկները:

—Սո՛ւս. բնած են հողի տակ,  
Տար ծածկըւած ողջ ձմեռը  
Ձիւն ծածկոցով ըսպիտակ:

Կը գայ գարնան արևն էլ ետ  
Իր շողերով կենդանի,  
Չմրան սաստիկ ցրտերի հետ  
Ձիւն ծածկոցը կը տանի:

—«Ելէ՛ք, կ'ասի, իմ մանուկներ»:

Ու հէնց նրանք իմանան,  
Դուրս կը հանեն գլխիկները,  
Աչիկները կը բանան:

1) Ինչո՞ւ ձմեռը խոտ ու ծաղիկ չի լինում:

2) Ի՞նչու ձմեռը խոտն ու ծաղիկները չեն ոչնչանում:

### 35. Չմեռը

1.

—Օ՛ֆ, երբ պէտք է անցնի էս անպիտան ձմեռը,—ասում էին մարդիկ փակ սենեակներում:



—ՕՓ, երբ պէտք է վերջանայ էս անիրաւ ձմեռը, — գան-  
գատուում էին կենդանիները նեղ որջերում:

—ՕՓ, երբ պէտք է ագատուենք էս անտանելի ձմեռայ  
ձեռքից, — տրտնջում էին թռչունները մերկ ճիւղերին:

Ու սաստիկ բարկացաւ ձմեռը: Վճռեց մէկ անգամից  
վերջացնի բոլորին:

Չայն տւաւ բուբ ու բորանին, կանչեց սառնամանիքները,  
հաւաքեց իր բոլոր գորութիւնը ու յարձակեց աշխարհի վրա:

Սոր ձիւնով բռնեց ճանփաները, կապեց ջրերը, կախ տւաւ  
սառցէ լուրաներ տանիքներից ու ծառերից, սառցէ վարա-  
գոյրներ քաշեց լուսամուտներին, խցկեց որջերի բերանները  
և դանակի պէս կտրող սուր քամին բաց թողեց դաշտերի,  
սարերի ու ձորերի վրա:

2.

Բայց իզո՛ւր:

Թէև թռչուններից մի բանիսը ցրտահար եղան, բայց մը-  
նացածները կուշ եկան տների ծածկերի տակ, ծխնելոյզների  
մօտ, տար ճեղքերում և չը մեռան:

Վայրի կենդանիները հաստ մուշտակները հագին՝ չէին  
փախենում ձմեռայ բարկութիւնից և դուրս էին գալիս որս  
անելու:

Մարդիկ աւելի պնդացրին պատուհաններն ու դռները,  
փայտը անդադար ճարճատում էր վառարանի մէջ. հագան ի-  
րենց ամենատաք շորերը, գնացին իրենց գործին:

Ձմեռը տեսաւ այս բոլորը, տեսաւ ու յուսահատուեց:

Յուրտը օրէօր թուլացաւ, արևը բանի գնաց աւելի տա-  
քացաւ, լուեց ջրերի կլկլոցը, թռչունները ուրախ-ուրախ եր-  
գեցին, դաշտերը կանաչ հագան ու մարդիկ բաց արին դուռ  
ու պատուհան:

Քարուն էր:

1) Ի՞նչպէս են ձմեռայ ցրտիցը պատասխարում՝ մի՞մոն, ման՞ծը,  
մեղրն, օճը, կրիան, գորտը, ձուկը:

2) Երեխաները ձմեռը ի՞նչպէս են զարմանում:

## 36. Կոյր աշուղը

Կոյր աշուղը մի տան բակում

Եկել նստել երգ է երգում:

Երգում է ու սագին տալի

Էնպէս տխուր ու սրտալի:

«Է՛յ պարոններ, երնէ՛կ նրան,

Ով տեսնում է ամեն օր

Կապոյտ կամար, արևի լոյս

Ու երեսը իրեն մօր»:

Երգում է ու սագին տալի

Տխուր-տխուր ու սրտալի:



Ա. Ու ա ծ. — Կոյրն ի՞նչ կուզի. շուխտ աչքի լոյս:

## 37. Փողը

Շատ ժամանակ չէ, ինչ կտորւել է Հոփսիկի ոտը: Հայրը  
շատ դէս ու դէն ընկաւ, շատ բժիշկների դիմեց, բայց ոչինչ  
չօգնեց. աղջկայ ոտը կտրեցին:

Մի օր հայրը նստել գրում էր սեղանի առաջ. Հոփսիկը  
փայտէ ոտը թըխկթըխկացնելով՝ մօտեցաւ նրան:

— Հայրիկ ջան, հերիք չի՞, ինչո՞ւ այդքան նստում ես, գը-  
րում ես հա գրում:

— Բաս ի՞նչ անեմ, աչիկս, չէ՞ որ պէտք է փող աշխատեմ:

— Ի՞նչիդ է պէտք փողը, հայրիկ ջան: Մի կտոր թուղթ է  
կամ մի պատիկ ոսկի, հօ էլ ոչինչ:

— Բայց ինչ որ ուզենաս, փողով կարող ես առնել, — ասաւ  
հայրը. — Ա՛յ, քեզ համար խաղալիք, քաղցրեղէն, սիրուն շոր,  
զլխարկ, ինչ որ ուզենաս...

Հոփսիկը աչքերը յառեց մի կէտի, մտածեց, մտածեց և  
յանկարծ ասաւ.

— Ինչ որ ուզենամ, հայրիկ... Ոտ գնի ինձ համար, հայ-



ըիկ ջան, մի իսկական ոտ: Այնպէս ուզում եմ երկու ոտով վագեմ, ուզում եմ թռչկոտեմ, ուզում եմ խաղամ. մի սոտ, հայրիկ ջան, մի սոտ:

Հայրը ոչինչ չը պատասխանեց, զրկեց աղջկան, սեղմեց կրծքին ու սկսաւ համբուրել:

Հոփսիկը զգաց թէ ինչպէս ամուր զարկում էր հայրիկի սիրտը, ու նայեց նրա աչքերին: Հայրիկի աչքերում արցունքներ էին փայլում:

- 1) Ինչո՞ւ էին արցունքներ փայլում հայրիկի աչքերում:
- 2) Ի՞նչ մտածեց Հոփսիկը հայրիկի արցունքները տեսնելով:

### 38. Երկրի շուրջը

—Հայրիկ ջան, ի՞նչ կայ մեր այգիներից դէնը,—հարցրեց Յասմիկը:


- Չը գիտե՞ս, աղջիկս: Արտեր:
  - Իսկ արտերից դէ՞նը, հայրիկ:
  - Սարեր: Տես:
  - Իսկ սարերից դէ՞նը:
  - Կրկին սարեր, կրկին ձորեր, ծովեր:
  - Իսկ ծովերից դէ՞նը:
  - Ուրիշ երկիրներ, ուրիշ աշխարհներ, էլի ծով, էլի ցամաք:
- Եւ գիտե՞ս, հոգիս, եթէ այդպէս գնաս ու գնաս՝ ո՞ւր կը հասնես:

- Ո՞ւր:
- Հէնց այնտեղ, որտեղ հիմա կանգնած ես:
- Վա՛հ,—զարմացաւ Յասմիկը:

- 1) Խնձորի վրա նստել էին երկու մանւծ. մէկը մամփայ ընկաւ, գնաց ուղիղ, ուղիղ, մ'իշտ առաջ: Ո՞ւր հասաւ:
- 2) Գիտե՞ս՝ ինչ ձեւ ունի երկիրը:
- 3) Ի՞նչով են մամփորդում ցամաքի վրա. ինչով են մամփորդում ջրի վրա:

4) Ի՞նչ տեսակ աղջիկ էր Յասմիկը:

Հանելուկ.—Կ'երթայ, կ'երթայ՝ ճամփայ չը կայ, ճամփայ կ'երթայ՝ փոշի չը կայ:



### 39. Այրի կնոջ երգը

Մանի, մանի, ճախարակ,  
 Նրստենք բանի, ճախարակ,  
 Անտէրին տէր, ճախարակ,  
 Որբերին հէր, ճախարակ:  
 Լուսնեակը դուրս է եկել,  
 Աչքերիս լուս է եկել:  
 Լուսնի լուսով մանեմ ես,  
 Միպտակ ոստեր անեմ ես,  
 Աղբառ օրով ու լացով,  
 Որբեր պահեմ մանածով:  
 Մանի, մանի, ճախարակ,  
 Նրստենք բանի, ճախարակ,  
 Անտէրին տէր, ճախարակ,  
 Որբերին հէր, ճախարակ:

- 1) Ի՞նչու այրի կինը լուսնի լուսով է մանում, ոչ թէ ցերեկը:



2) Ինչով է նախարակը «անտերին տէր, որբերին հէր»:

3) Թելը ի՞նչից են մանում:

4) Թելից ի՞նչ են գործում:

#### 40. Ոսկու կարասը

1.

Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրանց մեծերից, թէ մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզր:

Չմեռը էս աղքատ հողագործի եղները սատկում են: Գարունը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզր չի ունենում թէ վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին:

Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դէմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս, մէջը լիքը ոսկի: Եղները լծած թողնում է, վազում է գիւղը հողատիրոջ մօտ:

— Հէյ, աչքդ լուս, ասում է, քու հողումը մի կարաս ոսկի դուրս եկաւ, արի տար:

— Չէ, ախպէր, էտ իմը չի, — պատասխանում է հողատէրը: — Հողի վարձը դու տւել ես, դու վարում ես, էն հողումը ինչ էլ դուրս գայ՝ քունն է: Ոսկի է դուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է:

Սկսում են վիճել. սա ասում է քունն է, նա թէ չէ՝ քունը: Վէճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագաւորի մօտ գանգատ: Թագաւորը մի կարաս ոսկու անունը լսում է թէ չէ — աչքերը չորս է բաց անում: Ասում է.

— Ոչ քունն է, ոչ դրանք. իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել — իմն է:

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է, կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում — ի՞նչ ոսկի. կարասը լիքը օձ...:

Չարհուրած ու կասաղած ետ է գալի: Հրամայում է

պատժեն անգէտ ունջպարներին, որ համարձակել են իրեն խաբել:

— Չէ՛, թագաւորն ապրած կենայ, — գոռում են խեղճերը, մեզ ի՞նչու ես սպանում. լաւ չես տեսել: Օձ չը կայ էնտեղ, ոսկի է, ոսկի...:

Թագաւորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկը գնում են, ետ գալի թէ՛ ճշմարիտ, ոսկի է:

— Վահ, զարմանում է թագաւորը: Ասում է՝ երևի լաւ չը տեսայ, կամ տեսածս էն կարասը չէր:

Վեր է կենում մին էլ գնում:

Կարասը բաց է անում — դարձեալ մէջը լիքը օձ:

Էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի — չեն հասկանում:

2.

Թագաւորը հրամայում է, հաւաքում է իր երկրի իմաստուններին:

— Բացատրեցէք, ասում է, ո՞վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա: Էս հողագործներն իրանց հողում կարասով ոսկի են գտել: Ես եմ գնում — կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում — ոսկի: Էս ի՞նչ կը նշանակի:

— Դրա բացատրութիւնն էս է, թագաւոր, եթէ չես բարկանալ, — ասում են իմաստունները: — Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է զրկած իրանց ազնուութեան ու արդար աշխատանքի համար: Երբոր նրանք են գնում, իրանց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբոր դու ես գնում, գնում ես որ ուրիշի բախտը յափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում:

Թագաւորը ցնցւում է, խօսք չի գտնում պատասխանելու:

— Դա՛ւ, ասում է, դէ հիմի էն որոշեցէք թէ էտ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին:

— Ի հարկէ հողատիրոջը, — ձայն է տալի վարող գիւղացին:

— Չէ՛, վարողինն է, — մէջ է մտնում հողատէրը: Ու նորից սկսում են կռուել:



—Լաւ, լաւ, կացէք,—կանգնեցնում են իմաստունները,—  
ի՞նչ ունէք դուք տղայ, կամ աղջիկ:

Իսկուհի է գալի, որ մինը մի տղայ ունի, միւսը մի աղջիկ:  
Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրանց աղջիկն  
ու տղէն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց:  
էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու  
կռիւր վերջանում է, սկսում է հարսանիքը: Օրսն օր, օրսը  
գիշեր հարսանիք են անում. կարասով ոսկին էլ, որ պարգև  
էր զրկած իրանց ազնուութեան ու արգար աշխատանքի համար,  
տալիս են իրանց զաւակներին:

Բարին էստեղ, չարը էն ազահ թագաւորի մօտ:

#### 41. Թող փշի քամ ին

Թող փշի քամին պազ պազ երեսիս,  
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,  
Որքան որ կուզի՝ թող փշի հիւսիս,—  
Յուսով եմ վաղ-ուշ, գարունը պիտ գայ:

- 1) Բացի հիւսիսից աշխարհի էլ ի՞նչ կողմերը գիտէք:
- 2) Աշխարհի կողմերը ինչպէս էք իմանում:
- 3) Չեր երկրում ցուրտ քամին ո՞ր կողմից է փչում:

#### 42. Քեռի Սիմօնի նապաստակը

1.

Քեռի Սիմօնը շատ լաւ մարդ է. ափսոս որ մի քիչ գի-  
նուն բարեկամ է:

Մէկ օր աղան նապաստակ է ուղարկում նրա ձեռքով քա-  
ղաք ընկերոջ մօտ նւէր: Քեռի Սիմօնը լօլօղականջ-կարճպո-  
չանուն ձգում է մի պարկի մէջ, պարկի բերանը սլորում,  
պարկը շալակում ու ճանապարհ ընկնում: Ո՞նց է գնում,  
սնց... Իսկ նապաստակը պարկում կուշ է եկել, կծիկ կտրել:  
Ճանփի կէսին մի գինեատուն կար: Քեռի Սիմօնը ուզեց

առանց նայելու շտապով մօտից անց կենայ. մի տասը քայլ  
էլ դէնը գնաց ու... չը համբերեց, ետ նայեց: Խանութի շէմ-  
քում ծանօթներ տեսաւ: Մտածեց. «Ամօթ է, որ մէկ բարի  
լուս էլ է չասեմ»...

Քեռի Սիմօնը մտաւ գինեատուն: Պարկը դուրսը վայր է  
դրել, ծանօթների կենացն է խմում: Չը գիտի թէ գլխին ի՞նչ  
են անելու:

Խմեց, պարկը շալակը գցեց ու բայեաթին կլկացնելով  
առաջ է գնում: Մենակ էս նապաստակը ինչ որ շատ է վեր-  
վեր թռչում պարկի մէջ: Պահ էս ինչ սուր ատամներ է ու-  
նեցել: Քեռի Սիմօնի մէջքը կարծես ասեղներով ծակծակելիս  
լինի:

—Այ, հանգիստ կաց, շղթիկ խնամի: Շոքեցիր համ: էս է  
կը հասնենք, մուշտակդ կը հանեն, դէ գնա ու էստեղ տկոր  
տկոր տրտինգ տո՛ւր:

Քեռի Սիմօնի քէֆը տեղն էր:

էս էլ անա աղայի ընկերոջ տունը:

—Թըր՛խկ, թըր՛խկ: Բաց արէք, բաց արէք: Մէկ նապաս-  
տակ եմ բերել, մէկ նապաստակ որ... Դէ, շտապեցէք, շոքել է:  
Ողջ տանեցիք դուրս թափւեցին: Քեռի Սիմօնը նապաս-  
տակը առօք փառօք պարկից հանում է:

Կատնէ:

Քեռի Սիմօնը շղթած՝ կանգնել է կատուի պոչից բարձր  
բռնած:

—Այ նապաստակը քեզ լինի, քեզ,—կանչում է տանտի-  
կինը. աղայի ընկերը բարկանում է, երեխաները ծիծաղում  
են, տան շները հաչում են:

Քեռի Սիմօնը վերջապէս կատուն ձգում է նորից պարկը,  
շալակում և—հայդէ ետ, դէպի գիւղը:

2.

Ճամփին մտածում է և ինքն իրան ասում.

—Քեռի Սիմօն, տեսա՞ր հօ, հօ տեսա՞ր: Ախր նապաստակ



բռնողը դո՛ւ չէիր, դո՛ւ, խելքի տոպրակ: Չը լինի թէ աղէն հանաք է արել, ինձ խայտառակել է:

Գնում է, առաջլանից շտապով է գնում: Էլի գինետան մօտից է անցնում:

Մտնի, թէ՛ չը մտնի: Չէ, ի՞նչպէս կարելի է. պէտք է շուտով տուն հասնի. էս բան է՝ որ իր տարիքի մարդուն խայտառակեցին ժողովրդի միջին: Չէ, չէ, չի՛ մտնի:

Քեռի Սիմօնը մի բսան քայլ էլ դէնը գնաց:

—Բա էս այրւած սիրտն էլ է չը հովացնեմ,—մէկ էլ մըտածեց նա, պարկը մէկ ուսից միւսը ձգեց ու շուռ տւաւ դէպի գինետունը:

Էս անգամ մի երկու բաժակ կոնծեց ծանօթների կենացը: Նրանք էլ հօ իրանց անելունն արին:

Պարկը շարակին տհա մտնում է մեր քեռին գիւղը:

—Ո՞նց է սուս կացել, սրան տես: Հիմա թռչկոտիւր պարկի մէջ, է... գիտես՝ որ էս է զրխկ եմ անելու քեզ, հա՛... Մէկ ազին տեսնեմ դեռ: Էսպէս էլ խայտառակութիւն: Քեռի Սիմօնը ո՞վ — կատուն ո՞վ: Տօ, էն աշխարհքի պարծանք որսկանը ո՞վ — մկան գողն ո՞վ:

Թրը՛խկ հա թրը՛խկ, ո՞նց է ծեծում քեռի Սիմօնը աղայի դուռը:

—Բաց արէք էլի, բաց արէք: Էս ալևորիս խայտառակեցիք: Չեզ մէկ կատու ցոյց տամ, մէկ կատու սր...

Տանեցիք դուրս թափւեցին:

—Ահա, աղա, ընկերդ քեզ ետ է զրկում: Ասում է. «էս դու, էս էլ քո նապաստակը»:

Մէկ էլ զորթ՝ նապաստակը չը հանի պարկից:

Քեռի Սիմօնը շղկած կանգնել է՝ նապաստակի երկար ականջներից բարձր բռնած: Աղան աչքերը չռած նայում է, թէ նապաստակը ի՞նչու է ետ բերել:

—Թ՛հ, սատանի ճուտ,— յանկարծ աղաղակեց քեռի Սի-

մօնը: Նապաստակը ձեռքից վայր ընկաւ ու փախաւ, աղան կանգնած հարայ է տալիս, շները վազում են:

3.

Էն է ու էն՝ քեռի Սիմօնը էլ նապաստակ չի որսում:

Էն է ու էն՝ աղան և իր ընկերը իրար հետ վիճում են:

—Դու ինձ ինչո՞ւ էիր կատու ուղարկում, ես քո մասխարան եմ:

—Ասու՛ած, երկինք, զրկածս նապաստակ էր, նապաստակ: Հարցնում են քեռի Սիմօնին.

—Այ ալևոր, քո բռնածը, քաղաք տարածը նապաստակ չէր:

—Նապաստակ էր, աղա ջան, դու շատ ապրես, նապաստակ էր:

—Այ մարդ, քո բերածը կատու չէր, սև կատու,—հարցնում է ա-



ղայի բարեկամը:

—Կատու էր, աղա ջան, բաս կատու չէր:

Էսպէս մինչև էսօր էլ վիճում են:

Դուցէ դո՛ւք սրանց բացատրէք, թէ ի՞նչպէս է որ նապաստակը կատու դարձաւ, կատուն էլ ետ նապաստակ:


43. Վ Է Ճ

Գեախնն ասաւ. Ես աշխարհքի թագաւորն եմ:  
Չիւնը ասաւ. Բայց ես կը գամ քեզ կը ծածկեմ:  
Քամին ասաւ. Չիւն, ես որ գամ, ո՞ւր կը մտնես:



Չիւնը ասաւ. Գաս—կը մտնեմ բարերի տակ:  
 Անձրեն ասաւ. Բա ես որ գամ՝ ուր կը մտնես:  
 Չիւնը ասաւ. Բեզ հետ ո՞վ է, տօ թացըռեի:

#### 44. Աղետը բաժանարար



Երկու ագռաւ մի կտոր պանիր էին  
 գտել: Ուզում էին իրանց մէջ բաժա-  
 նեն: Մինն ասում էր—ես բաժանեմ,  
 միւսը թէ՛ չէ, ես: Ու կռուում էին ծառի  
 վրա: Ոչ մինը չէր համաձայնում որ  
 ընկերը բաժանի:

Մի աղէս տեսաւ, եկաւ ծառի տակը կանգնեց.  
 — Ինչո՞ւ էք կռուում, ասաւ, պանիրը ներքև գը-  
 ցեցէք, էնպէս բաժանեմ, որ ոչ մէկիդ բաժինը աւել  
 պակաս չը լինի:

Վէճը դադարեց. ագռաւները պանիրը գցեցին ծա-  
 ռի տակը:

Աղէսը երկու կտոր արաւ, բռնեց երկու թաթե-  
 րի մէջ, ծանր ու թեթև արաւ, որ ոչ մինը աւել պա-  
 կաս չը լինի:

— Էս մինը ծանր է, ասաւ, ու կծեց:  
 Դարձեալ թաթերով կռուեց, հիմի էլ մէ-  
 կէից կծեց:  
 Կծելով, կծելով բոլորը կերաւ ու  
 սուս ու փուս գնաց իր բանին:  
 Ագռաւները մ'նացին ետեից նա-  
 յելիս:

1) Ագռաւները նրանով կարող էին գտնել պանիրը:

Առաձներ.— 1) Աշխարհքը խելով են կերել:

2) Գողը գողից գողացաւ, Աստուած վերից զար-  
 մացաւ:

#### 45. Գարուն

Արի, գարուն  
 Արի, սիրուն,  
 Բեր պարզ արև,  
 Առատ արձրև,  
 Խնորի Տէրէն,  
 Հաճար, ցորեն.  
 Ջրմենն էր մեծ,  
 Ողջ ըսպառեց:  
 Արի, գարուն,  
 Արի, սիրուն:

#### 46. Խաղը



Երեխաները խաղում էին: Արամը յան-  
 կարծ մի բան քչփչաց քուրիկի ականջին ու  
 երկուսն էլ ծածուկ ժպտացին:

— Հա, էտպէս անենք— փսփսաց քուրիկը  
 ու բարձր կանչեց.— Եկէք պահմըտոցիկ խա-  
 ղանք:

— Պաղանք, խաղանք,— ուրախ-ուրախ  
 մօտ վազեց փոքրիկ Անահիտը, թողնելով իր  
 խաղալիքները:

— Առաջ ո՞վ թաք կենայ,— հարցրեց Արամը:

— Ե՛ս, ես, կանչեց Անահիտը.

— Դու կարո՞ղ ես որ...

— Էնպէս լաւ թաք կենամ: Իսկի չէք  
 գտնի:

— Թաք կաց,— ասաւ Արամը քրոջը աչքով անելով:— Միայն  
 տես, շուտով դուրս չըջգաս, որ մենք քեզ շատ փնտրենք:

— Գնացէք, գնացէք, ես գիտեմ.— ասաւ Անահիտը, իսկ



Արամն ու քոյրը գնացին միևս սենեակը:

Անահիտը ոտի ծայրերին գնաց դէս, գնաց դէն, փորձեց մի յարմար տեղ գտնի, վերջը մտաւ նախասենեակում հօր երկար վերարկուի տակը ու տապ արաւ:

Սպասեց, երկար սպասեց, բայց Արամն ու քուրիկը չէին գալիս: Նրան այնպէս էր թւում, թէ բակից լսում էր նրանց ուրախ ձայները: Մէկ ուզում էր դուրս գայ, նայի թէ ուր մընացին, մէկ էլ յիշում էր որ դուրս գալ չի կարելի:

Կծկւել էր վերարկուի տակ, սպասում էր ու սպասում: Իսկ Արամն ու քուրիկը բակում ծիծաղելով պատմում էին դրացի Զաբէլին, թէ ինչ խաղ խաղացին իրանց Անահիտի գլխին:

1) Ի՞նչու Արամի ու քուրիկի խաղացած խաղը վատ էր:

Շ ու լ տ ա ս ե լ ու կ . — 2 ր թ ո չ ի , թ ո ո չ ք թ ո չ ի :

### 47. Կանանց ախպեր

է՛յ կանանց ախպեր,

է՛յ ճանանց ախպեր,

Արի, բեզ հետ. բեր

Արևի շողեր.

Բեր անուշահոտ

Ծիլ, ծաղիկ ու խոտ,

Կարկաչուն վրտակ,

Երկինք կապուտակ,

Խատուտիկ հաւքեր,

Զրբնգան երգեր,

Գառների մայիլն,

Սաղ, ուրախութիւն.


է՛յ կանանց ախպեր,

է՛յ ճանանց ախպեր:

1) Ի՞նչու ենք ասում գարնանը «կանանց ախպեր»:

2) Ձմռան ինչ ախպեր կասէր:

Ա. ա ծ — Մէկ ծաղկով գարուն չի գայ:



### 48. Առիւծի երազը

1.

Առիւծի կորիւնը փակւած էր վանդակում: Նա մռայլ նայում էր ամուր երկաթէ ձողերի ետևից: Կարօտով յիշում էր նա իր հայրենի տաք անապատը, յիշում էր թէ ինչպէս գիշերները, աստղերի լուսով, իր մօր հետ ընկնում էր արագավազ եղնիկների ետևից, ինչպէս ազատ, ուրախ, իր քոյր ու եղբայրների հետ, մօր կողքին, խաղում էր արմաւենիների տակ:

Այժմ անցել է ամեն բան, և գազանանոցում փակւած, գերի, տխուր նայում էր նա հաստ ձողերի ետևից:

Գիշեր էր: Շուրջը լուռ ու խաղաղ: Գազանանոցի գերիները—վագրը, արջը, գայլը, կապիկները, շայլամը, եղջերուները,—ամենքը իրանց վանդակներում, յարգի վրա ընկած՝ ըսպասում էին լուսանալուն:

Վերջապէս յոգնած առիւծի ձագն էլ գլուխը դրաւ թաթերի վրա ու բնեց:



Գիշերւայ մի ժամանակ յանկարծ գազանանոցի դուռը ետ քացւեց ու ներս մտաւ նրա մայրը: Ներս մտաւ հպարտ ու հզօր, կրակոտ աչքերը ման ածաւ վանդակների վրա ու տեսաւ...

Նա տեսաւ իր զաւակին: Աչքերը փայլատակեցին, մռնչաց, յարձակւեց, իր զօրեղ զարկով շարդեց վանդակի ձողերը...

Կորիւնը ուրախութիւնից ճչաց, վրա թռաւ, որ ընկնի մօր գիրկը, գիպաւ երկաթի ձողերին ու զարթնեց...

Տեսաւ՝ երազի մէջ էր...

Գիշեր էր: Շուրջը լուռ ու խաղաղ: Գազանանոցի գերիները—վագրը, արջը, գայլը, կապիկները, շայլամը, եղջերուները—ամենքը իրանց վանդակներում, յարգի վրա ընկած՝ ըսպասում էին լուսանայուն:

Կորիւնը երկար ու ձիգ մոնչում էր գիշերւայ լուսթեան մէջ:

1) Ինչո՞ւ էր մոնչում Կորիւնը:

2) Ինչո՞ւ են զագաններին փակում վանդակների ս էջ:

### 49. Մարտը

Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս.

Մարդու հանգիստ չի տալիս:

Էսօր ուրախ օր կանի,

Վաղը անձրև ու քամի.

Առաւօտը պայծառ օդ,

Կէսօրը մութն ու ամպոտ:

Մին հագնում է սպիտակ,

Մին կանանչին է տալիս,

Մի օր ցուրտ է, մի օր տաք.

Մին խնդում է, մին լալիս.

Ա՛խ, էսպէս էլ գիժ ամիս...

### 50. Գարունն է եկել

Գարունն է եկել նախշուն թևերով,

Նախշուն թևերը պէս-պէս ձևերով,

Գոյն-գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,

Վարդ, մելիակ, շուշան անուշ հոտերով:

### 51. Թե ինչու են ծաղկում մանուշակները

Ձմեռը նոր էր անցել: Գարնան մի պայծառ առաւօտ, երբ արևը ծագում էր շքեղ, երբ թռչունները երգում էին ուրախ, հովը խաղում էր թփերի հետ,—այդ ժամանակ անտառում քացւեցին թարմ անուշահոտ մանուշակները: Ճերմակ ճնձաղիկները նրանց ողջունեցին թփի տակից, դեղին գինեբուկը ժպտաց միւս կողմից, շուրջը սկսեցին թրթռալ գոյն-գոյն թիթեռները, թաւամազ ճանճերը ու ժիր մեղուները:

—Ի՞նչ հրաշալի մանուշակներ են,—կանչեց փոքրիկ աղջիկը:—Կը քաղեմ, փունջ կը կապեմ, կը դնեմ ծաղկամանիս մէջ, իմ պատուհանում:

Ասաւ, ձեռքը մեկնեց որ քաղի, մին էլ յանկարծ վախեցած ետ քաշեց:

Մի մեծ բրդոտ ճանճ թռաւ ծաղկի վրայից բուռացնելով.

—Յիմար աղջիկ. չը համարձակւես իմ ծաղիկները քաղես: Նրանք ինձ համար են քացւել, ինձ համար են անուշ փոշի պատրաստել ու քաղցր հիւթ պահել իրանց մէջ:

Սկսեցին ժրժրալ և՛ մեղուները, և՛ թիթեռները, և՛ բրդէգները: Ամեն մէկն ասում էր.

—Իմն են ծաղիկները:

Արևը լսեց, ժպտաց ու ասաւ.

—Անմիտներ, ի՞նչու համար են վիճում: Երկրի վրա ամեն ապրող բան ծնւած է իմ լուսից ու տաքութիւնից: Չեն իմանում որ այդ ծաղիկներն էլ իմն են:




Աղջիկը մնացել էր մէջտեղը կանգնած: Ամենքին էլ լսում էր ու չէր իմանում՝ ո՞րին հաւատայ:

Վերջապէս դարձաւ մանուշակներին.

— Ասացէք, սիրուն մանուշակներ, ի՞նչու համար էք ծաղկում դուք, ի՞նչու համար են բացւում ձեր հոտաւէտ պսակները և ո՞ւմ համար էք ապրում:

Ծաղիկները պատասխանեցին.

— Մենք ապրում ենք ապրելու համար, և ծաղկում ենք, սերմեր ենք թողնում, որ մեզնից յետոյ էլ մեզ նման մանուշակներ ծաղկեն ու ապրեն մեր մեռնելուց յետոյ:



## 52. Մանուշակները

Կապոյտ գլխով, կանաչ ոտով,  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով:  
Թէև տունկս փոքրիկ է, ցած,  
Արօտներում միշտ թաք կացած,  
Բայց իմ փունջը ամենի տան,  
Թէ աղբատի, թէ մեծատան,  
Իբրև գարնան առաջին զարդ,  
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:  
Ես եմ սիրուն գարնան գուշակ,  
Իմ անունըս է մանուշակ:

## 53. Ածխարարն ու պարոնը

Արմենակն ու Գէորգը դասընկերներ էին:

Արմենակը մի հարուստ պարոնի որդի էր, իսկ Գէորգը ածխարարի: Մի օր, վէճի ժամանակ, Արմենակը Գէորգին անւանեց «աղբատի ճուտ»: Գէորգը կարմրեց, աչքերը արտասուքով լցեցին, ու ոչինչ չը պատասխանեց: Գնաց տուն, հօրը պատմեց ու զանգատեց:

Ածխարարը միւս օրը վարժարան եկաւ որդու հետ ու ամբողջ դասարանի առջև զանգատեց ուսուցչին: Այդ միջոցին վրա հասաւ Արմենակի հայրը, հարուստ պարոնը:

— Այս բաները զանգատւում է ձեր որդուց, — դիմեց նրան ուսուցիչը: — Պատճառը, — հարցրեց պարոնը:

Պատճառն այն է, որ ձեր որդին սրա որդուն անւանել է «աղբատի ճուտ»:

Պարոնը յօնքերը կիտեց, կարմրեց ու որդուն հարցրեց.

— Ճշմարիտ է, ասել

ես դու այդ խօսքը:

Արմենակը գլուխը կախ գցած՝ լուռ կանգնած էր: Հայրը բռնեց նրա ձեռքից ու հրեց դէպի Գէորգը:

— Ներողութիւն խնդրի:





Ածխարարը կամենում էր արգելել, բայց պարոնը մտիկ  
չարաւ ու կրկնեց.

—Ներողութիւն խնդրի ու կրկնի իմ ետեկց: «Խնդրում  
եմ, ների ինձ հօրդ զէմ ասած յիմար խօսքիս համար: Իմ  
հայրը իրեն պատիւ է համարում նրա ձեռքը սեղմելը»:

Ածխարարը դարձեալ ուզում էր ընդդիմանայ, բայց պարոնը  
նրա վրա ուշք չը դարձրեց, և Արմենակը կամացուկ կա-  
կազելով կրկնեց հօր ետեկց.

—Խնդրում եմ... ների ինձ... հօրդ զէմ... ասած... յիմար  
խօսքիս համար: Իմ հայրը... իրեն պատիւ է համարում... նրա  
ձեռքը սեղմելը:

Այն ժամանակ պարոնը իր ձեռքը մեկնեց, որն ածխարա-  
րը ամուր սեղմեց:

—Խնդրեմ այս երկուսին իրար կողքի նստեցնէք,—ասաւ  
պարոնը ուսուցչին:

Ուսուցիչը Արմենակին ու Գէորգին նստեցրեց մի նստա-  
րանի վրա:

- 1) Միթէ Արմենակը իրատնը ունէր այդ խօսքերը ասելու Գէորգին:  
Ա. ո. ա. ծ. — Դու ազա, ես ազա, մեր ազունը ո՞վ ազայ:

## 54. Մեղու

Ահա ծագեց արեգակը,  
Ահա ծաղկեց մանիշակը,  
Մեղուն թողեց իր փեթակը  
Տրդտրդալով, տրդտրդալով:

Անուշ մեղրը մանր տղոց,  
Դեղին մումը ամեն սրբոց,  
Իսկ չարերին կրճ ու խայթոց,  
Կրակը ծալով, կրակը ծալով:

- 1) Ռ՞մ համար է մեղուն մեղր պատրաստում:



Համար նոր էին վառել ու դրել լուսամուտի առաջ:  
Այգտեղից աչքը գցեց ու տեսաւ որ հեռում,  
հորիզոնի վրա, ծառերի ետե արևը մայր է մտնում:  
Նայեց, նայեց ու ասաւ արեին.

—Ոչինչ, բարեկամ, սիրուն զատ ես, բաւա-  
կան էլ լոյս ես տալիս, բայց ինձ չես հասնի:  
Քամին այս որ լսեց, ծիծաղն այնպէս պրծաւ,  
որ իրան պահել չը կարողացաւ: Փնփ արաւ, ու  
լամպը հանգաւ:



- 1) Բացի լամպեց, էլ ինչով ենք գիշերները լուս անում:  
2) Արեւը իրատնը ունի ասելու թէ «երկրի վրա ամեն սարող  
բան ծնած է իմ լուսից ու տարութիւնից»:

Հանե լուկ.— Պոչը ջրում, գլուխը կրակում:





## 56. Արագիլ

Արագիլ, բարով եկար,  
Հայ, արագիլ, բարով եկար.  
Դու մեզ գարնան նշան բերիր,  
Մեր սրտերը ուրախ արիր:


Արագիլ, երբ գնացիր,  
Դու մեզանից երբ գնացիր,  
Հա՛ փչեցին բուք ու բորան,  
Ծաղիկները ամեն տարան:

Արագիլ, բարով եկար,  
Հայ, արագիլ, բարով եկար.  
Բունդ շինի դու մեր ծառին,  
Մեզ մօտ մնա՛ ամբողջ տարին:

## 57. Արագիլները

1.

Մի փոքրիկ գիւղի ծայրին, մի բարձր ծառի վրա, արագիլները զրել էին իրանց բունը: Մայրը նստել էր չորս ճուտիկների վրա, իսկ մի քիչ հեռու, տանիքի վրա, պահապան կանգնել հայր արագիլը: Նա մի ոտը վեր քաշած տնկել էր այնպէս անշարժ, կարծես փայտից լինէր շինած:



Ներքե, փողոցում խաղում էին մի խումբ երեխաներ: Հէնց որ աչքներին ընկաւ արագիլը, մինը սկսեց արագիլի հին երգը, ու ամբողջ խումբն էլ նրա հետ.

Հէյ, արագիլ, տուն գնա,  
Ցից մի ոտիդ մի մնա,  
Կինըդ նստած բնի մէջ՝  
Օրօրում է քնի մէջ:  
Էս մի ճուտիդ կախ կանեն,  
Էն մէկէլին դադ կանեն,  
Էս մի ճուտիդ կը մորթեն,  
Էն մէկէլին կը քերթեն:

—Մայրիկ, լսում ես, էտ տղերքը ի՞նչ են երգում,—ճշա-  
ցին փոքրիկ ճուտիկները:—Ասում են՝ մեզ պէտք է կախ անեն:

—Ականջ միք դնի, ոչինչ էլ չի լինի:  
Բայց երեխաները շարունակում էին  
երգել ու ջգրացնել արագիլին:

Իսկ մայր արագիլը սիրտ էր տալիս  
փոքրիկներին.

—Միք վախենայ. տեսէք՝ հայրիկը  
ինչպէս հանգիստ կանգնել է, էն էլ մի  
ոտի վրա:

—Ախ, մենք շատ ենք վախում,—  
ասին ճուտիկները ու գլուխները քաշե-  
ցին ետ բնի խորքը:

2.

Միւս օրը, երբ տղերքը նորից հա-  
ւաքել էին խաղալու, էլի սկսեցին իրանց  
երգը.

Էս մի ճուտիդ կախ կանեն,  
Էն մէկէլին դադ կանեն...

—Ուրեմն իրաւ մեզ պէտք է կախ անեն,—հարցրին ճու-  
տիկները:

—Չէ, ի՞նչ էք խօսում,—ասաւ մայրը:—Դուք պէտք է



Թուշել սովորէք. ես ձեզ կը սովորեցնեմ: Յետոյ միասին կը թուշենք դաշտը, գորտերին հիւր կը գնանք: Մեզ տանեն թէ չէ, խորը գլուխ կը տան ու կըսկսեն երգել. «Եկա՛ք, եկա՛ք. եկէ՛ք-եկէ՛ք-եկէ՛ք»: Մենք էլ կը սկսենք ուտել. էնպէս քէֆ կանենք որ...

— Իսկ յետոյ, — հարցրին ճուտիկները:

— Յետոյ կը հաւաքուենք էս կողմերի բոլոր արագիւններս ու կըսկսենք մեր աշնան վարժութիւնները: Չէ որ պէտք է լաւ թուշել իմանար. էտ շատ հարկաւոր բան է: Ով լաւ թըռչել չիմանայ, մեր խմբապետը նրան կը սատկացնի կտուցով:

— Էհ, ի՞նչ անենք. մի բան որ մեզ պէտք է մորթեն: Այ տես, տղէրքը ի՞նչ են ասում:

— Դուք ինձ ահանջ արէք, — պատասխանեց արագիւրը: — Աշնան մեծ վարժութիւններից յետոյ կը թուշենք սարերի, անտառների վրայով հեռու, հեռու, դէպի տաք երկիրները: Էնտեղ մեծ գետեր կան, ահագին ճահիճներ կան, մէջը լիքը գորտ. մտիր ցետը ու կեր, ինչքան կուզես:

— Ա, — բացականչեցին ճուտիկները:

— Հապա, տեսնո՞ւմ էք: Եւ երբ էնտեղ էսպէս հրաշալի է լինում, էստեղ էնպէս ցուրտ է անում, որ ամպերը սառչում ու կտոր կտոր, սիպտակ-սիպտակ թափւում են ցած:

Արագիւր իբրև թէ ուզում էր ասել՝ «ձիւն է գալիս»:

— Էն չար տղէրքն էլ պէտք է սառչեն ու կտոր-կտոր լինեն, — հարցրին ճուտիկները:

— Չէ, բայց դրա նման մի բան: Պէտք է փախչեն, մըտնեն իրանց մութ սենեակները ու մկների պէս թաքլկենան:

### 3.

Անցաւ մի քանի ժամանակ: Փոքրիկ արագիւնները արդէն այնքան էին մեծացել, որ կարողանում էին կանգնել բնի մէջ և դիտել իրանց չորս կողմը: Հայր արագիւր ամեն օր նրանց համար բերում էր գորտեր, փոքրիկ օձեր ու այդ տեսակ հա-

մեզ պատառներ, ինչ որ ընկնում էր կտուցը. եւ գանազան պատմութիւններ անում միշտ ճահճի մասին:

— Դէհ, ժամանակ է վերջապէս, պէտք է թուշել սովորէք, թէ չէ, — ասաւ մի օր մայր արագիւրը:

Ու չորս ճուտերն էլ դուրս պիտի ելնէին բնից: Առաջ էին գալիս, թեքերը բաց անում, բայց վախում էին ցած թափւեն:

— Տեսէք, ես ինչպէս եմ անում — սովորեցնում էր մայրը: — Գլուխներդ էսպէս առաջ ձգեցէք, ոտներդ էլ էսպէս ետև: Մէկ-երկու, մէկ-երկու... Էս է, որ կեանքի մէջ ձեզ պէտք է պահի:

Յետոյ ինքը թռաւ մի կտոր տեղ, Փոքրիկներն էլ ետևից, թրջ՝ մփ, ընկան կողքի կտուրը:

— Ես չեմ ուզում թուշեմ, — ասաւ փոքրիկներից մինը ու նորից մտաւ բունը: — Իսկի էլ պէտքս չեն տաք երկիրները:

— Ուզո՞ւմ ես ցրտից փետանաս, երբ ձմեռը հասնի: Թէ ուզո՞ւմ ես տղէրքը բեզ կախ անեն, խորովեն ու շամփրեն: Կա՛ւ, ուզո՞ւմ ես կանչեմ, — բարկացաւ մայրը:

— Չէ, չէ, մի կանչի, — ճշաց փոքրիկը ու նորից թռաւ կրտուրը միւսների մօտ:

### 4.

Երեք օրից յետոյ ճուտերը մի քիչ կարողանում էին թըռչել և կարծում էին արդէն, թէ էն է կարող են օդի մէջ բարձր թուշել և թեքերը փռել հանգստանալ:

Փորձում էին — բայց իսկոյն գլուխկոնծի ցած էին ընկնում ու ստիպւում էին նորից արագ թեքերը շարժել:

Ցածը, փողոցով անց էին կենում երեխաներն ու երզում իրանց երգը.

Հէյ, արագիւր, տուն գնա,

Ցից մի ոտիդ մի մ'նա:

— Մայրիկ, հիմա ցած չը թուշենք ու դրանց աչքերը չը հանենք, — հարցնում էին ճուտերը:


— Դուք ձեր բանին կացէք, — պատասխանում էր մայր ա-



րագիրը:—Մեր արածը շատ աւելի կարևոր է: Մէկ, երկու, երեք: Թռչենք աջ, զանգակատան շուրջը, հիմա էլ ձախ, մէկ, երկու, երեք: Այ, էտ մինը քէֆս եկաւ: Էսպէս որ գնայ, վաղը ձեզ կը տանեմ ճահիճ: Էնտեղ ուրիշ շատ արագիւններ կան. էնպէս արէք, որ ամենքն էլ ձեզ հաւանեն. ասէն՝ էս քնն լաւն են էս երեխէրքը, էս ումն են:

— Իսկ էտ անպիտան տղաներից մեր վրէժը հանելու չենք,— նորից հարցրին փոքրիկ արագիւնները:

— Թող արէք գոռան, ինչքան կուզեն: Չէ՞ որ դուք պէտք է թռչէք դէպի ամպերը, գնաք տաք երկիրներ, իսկ նրանք էստեղ պէտք է մրսեն: Ոչ կանաչ տերև են ունենալու, ոչ էլ գորտ:



Ա. ո. ս. ծ.— Չուկն ասաւ՝ խաղ շատ գիտեմ, բայց ինչ անեմ՝ ջրով բերանս լիքն է:

## 58. Ծիծեռնակ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ,  
չեռու աշխարհից եկաւ ծիծեռնակ,  
Բարով դու եկար, գարնան կարապետ,  
Բուն շինողներից ամենից վարպետ:

Պատուհանիս մօտ շինի բո բունը,  
Անուշ ճուղով երգի գարունը,  
Չու ամա, հանի գեղեցիկ ձագեր  
Ու մնա մեզ մօտ մինչև սեպտեմբեր:

## 59. Մժղուկը

1.

Ոչ ոք չը տեսաւ թէ ինչպէս ծնւեց փոքրիկ մժղուկը:  
Գարնան մի արև օր էր: Աչքը բաց արաւ, նայեց չորս  
կողմը ու կանչեց.

— Ի՞նչ լաւ է:

Մին էլ ոտիկներն իրար քսեց ու թռաւ: Թռչում է և ուրախանում ամեն բանով: Իսկ ներքևում խոտը կանաչին է տալի, և խոտի մէջ թաքնւած մի կակաչ ժպտում է ու ժպտում:

— Ինձ մօտ արի, փոքրիկ մժղուկ.— կանչում է ծաղիկը:

Մժղուկը իջաւ ծաղկի վրա,  
ծծեց նրա հիւթը ու ասաւ.

— Ի՞նչ լաւ է. և էս բոլորն  
իմն է:

Բայց դեռ խօսքը բերնումն  
էր, որ բըռացնելով եկաւ բըր-  
դոտ բոռը:

— Բ՛ր ու... էտ ո՞վ է նստել իմ  
ծաղկի վրա. բ՛ր ու... ո՞վ է խը-  
մում իմ քաղցր հիւթը. բ՛ր ու...  
Դէ՛նը կորի, անպիտան մըժ-

ղուկ:

— Սպասի, էս ինչ բան է,— տըզտըզաց մժղուկը.— չէ՞ որ էս  
բոլորն իմն է:

— Բ՛ր ու... չէ, իմն է:

2.

Մժղուկը ունեւրը զօռով ազատեց կատաղի բոռից: Նստեց  
խոտի վրա, լիզում էր ծաղկի հիւթով թաթախւած ոտիկները  
ու բարկացած խօսում.

— Ի՞նչ կոպիտ է էդ բոռը, զարմանալի բան է: Ա՛խր չէ՞  
որ բոլորն իմն է. արևն էլ, խնամն էլ, ծաղիկն էլ:



—Ո՛հ, ներեցէ՛ք, իմն է,—խօսեց բրդոտ ճիճուն, որ բարձրանում էր խոտի ցողունի վրա:

Մժղուկը գլխի ընկաւ, որ ճիճուն թռչել չը գիտի, և համարձակ ձայնը բարձրացրեց:

—Ներողութի՛ւն, բարեկամ, սխալուում ես. բոլորն իմն է. բայց ես հօ չեմ արգելում քեզ:

—Լաւ, լաւ, մտիկ արա, որ իմ խոտին չը դիպչես. ձեզանից էստեղ էնքան թռչում են որ... Դուք թեթևամիտ ժողովուրդ էք. իսկ ես ծանր ճիճու: Դէ, հայդէ, գնաս բարով:

3.

Մժղուկը թողեց ու թռաւ հեռու. տեսաւ ջուր:

—էս հօ իմն է ու իմը, իմ ջուրը: Ա՛խ, ի՛նչ լաւն է. էստեղ խոտ էլ, ծաղիկ էլ կայ:

Եւ ահա թռչում գալիս են ուրիշ մժղուկներ էլ:


—Բարի օր, բուրիկ:

—Աստժու բարին ձեզ, բուրիկներ: էտ ո՞ւր էք թռչում:

—Խաղ ենք անում. դու էլ արի մեզ՝ հեռու: Էնպէս ուրախանում ենք:

Ու գնացին, խաղում էին ջրի վրա, պտտւում ու թռչկոտում:

Յանկարժ, պ՛րժժ, ոնց որ մինը մի բար գցի, ճնճուկն ընկաւ մժեղների մէջ:



—Վայ, վայ, —ժրժրացին բոլորն ու ցրեցին դէս ու դէն:

Մին էլ երբ ուշքի եկան, տեսան՝ շատերն էին պակասել:

—Ա՛խ, անզգամ,—հայհո-

յում էին ծեր մժեղները.—ամբողջ տասը հոգի փչացրեց:

«Վա՛հ, ամբողջ տասը հոգի. էս հօ բոռից էլ անց կացաւ»:

4.

Մեր մժղուկի սիրան ահ ընկաւ, և միւս նորբուկները

հեռ միասին մտաւ ճահճի խոտերի արանքը, տապ արաւհ:

Բայց էստեղ էլ մի ուրիշ փորձանք: Երեք մժղուկի ձուկը կերաւ, երկուսին էլ գորտը տարաւ:

—էսպէս էլ բան կը լինի...—զարմացած մնացել էր մեր մժղուկը:—Միթէ կարելի՞ է ապրել էսպէս:


Գիշերն ընկաւ, մութը վրա հասաւ, ու բոլոր մժղուկները մտան եղէգնուտի տաք տեղերը, թաք կացան:

Վերև երկինքը լցւեց աստղերով, լուսինն էլ ծագեց, ու բոլորը միասին ցոլացին ջրի մէջ:

էնպէս սիրուն էր:

—Ա՛խ, իմ լուսնեակը, իմ աստղերը... շքնչում էր մըժղուկը, բայց ահից էնպէս կամաց էր շքնչում, որ ոչոք չը լսի:

—Ա՛խ, իմ աստղերը...— շքնչաց կամաց ու բնեց:



1) Մժղուկը վերջում էլ ինչո՞ւ համարձակ չէր ասում՝ էս բոլորն իմն է:

2) Բացի մժղուկից, էլ ո՞վ է կարծում, որ էս բոլորն իրն է:

3) Ռ՛մն է այս բոլորը:



## 60. Արօր

Ահա ծագեց կարմիր արև,  
Տաք ու պայծառ է օրը,  
Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Առաջ քաշէք արօրը:

Արտը վարենք, աղօս փորենք,  
Խոր աղօսներ հողի մէջ,  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Խորձեր դիզենք կալի մէջ:

Կը գայ ձրմեռ, մենք վախ չունենք,  
Ուրախ կանցնի մեր օրը,  
Ուտելու միշտ պաշար ունենք,  
Երբ լիք լինի մեր հորը:

Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Շուտով վարենք արտերը,  
Թող էլ չասեն մեր դրացիք,  
Ծոյլ են Հասօի եզները:

1) Արօրը գոթ մնից ինչով է զանազանում:

2) Ե՞րբ են վարում արտը:

## 61. Չիու տրտունչը



Գիւղացին գարի էր ցանում:  
— Էս ի՞նչ ես անում. ինչու ես էտ  
գարին հողին խառնում, — տրտնջում էր  
ձին. — Ի՞նչ կը լինէր ինձ տայիր՝ ուտէի,  
բան թէ էսպէս փչացնում ես:

Տէրը ոչինչ չէր պատասխանում ու  
իր ցանն էր անում:

— Թէ ինձ չես ուզում տաս, իշին  
տուր: Ուտի, ուժ անի, որ բարձես,  
չաղացր տանես:

— Թէ իշին էլ չես ուզում տաս, գոնէ հաւերին տուր:  
Կուտեն, քեզ համար ձու կածեն:

Տէրը շարունակում էր գարին շարտել աջ ու ձախ:

— Ի՞նչու չես պատասխան տալիս, — հարցրեց նեղացած  
ձին:

— Բո պատասխանը ամառը կը տամ, — տասա գիւղացին:

1) Ի՞նչ պատասխան պիտի տար ամառը գիւղացին:

2) Էլ ի՞նչ կենդանիներ են գարի ուտում:

## 62. Հատիկի գարրնէլը



Յորենի հատիկը պառկած էր հողի տակ:  
Եւ հատիկի մէջ քնած էր փոքրիկ սաղմը: Քնած  
էր ամբողջ ձմեռը:

Գարնան արևի շողը եկաւ կանչեց նրան.

— Չարթիր, գարուն է:

Եւ հատիկի մէջ գարթնեց սաղմը: Չարթնեց, սաստիկ  
բաղց զգաց, սկսեց ծծել իր մօտի պաշարը: Ծծեց, ծծեց ու  
մեծացաւ. պատռեց պարուրները ու արմատիկները խրեց  
ցած, փափուկ հողի մէջ, նոր կերակուր որոնելու:

Իսկ արևի ջերմութիւնը շարունակ քաշում էր նրան վե-  
րևից, ու սաղմը ձգւում էր դէպի այն կողմը, դէպի վեր:

Չգւեց, ձգւեց ու յանկարծ նրա դալար ծիլը դուրս նա-  
յեց հողի մի կողմի տակից:

Ինչ տանք էր, ինչ պայծառ ու ինչ ազատ նրա շուրջը:

Առաւօտեան հովիկը բնքուշ գգւեց նրան, գրաւ ցօղի մի  
կաթիլ նրա կիսաբաց թերթիկին ու փափսաց.

— Բարի լոյս:


1) Սրանից յետոյ ծիլը ինչպէս է մեծանալու եւ ի՞նչ է դառնալու:

2) Բացը ցորենից, ուրիշ էլ ի՞նչ հացաբոյս գիտէք:

3) Հացաբոյսերն ու խոտերը ի՞նչքան ժամ անակ են ապրում:

Հանելուկ. — Բռնեմ ափովս, շաղ տամ թաթովս, մեռնի բա-  
րով, ապրի տարով:






### 63. Գուրան

Լուսը լուսացաւ,	Գութան ջան, փարի,
Բարին շատացաւ.	Ակօսը շարի,
Վաղ լուսաբացին	Թափ տուր, թե արա.
Գութան լծեցին.	Շուռ տուր, սե արա.
Հորովէլ հօ...	Հորովէլ հօ...

Գութանը լարած,	Յանենք, արտ անենք,
Հօտաղը շարած,	Հնձենք, տուն տանենք,
Մաճկալը մաճին,	Ունենանք շատ հաց.
Չեռը ազանջին.	Օրհնեալ է Ասուած.
Հորովէլ հօ...	Հորովէլ հօ...

- 1) Էլ ինչ գործերներով են փորում հողը:
- 2) Բացի հողը մշակելուց, էլ ինչով են պարսպում գիւղացիք:
- 3) Ե՞րբ են ցանում:

Ա. ո. ա. ծ. — Ինչ որ ցանես, էն կը հնձես:  
 Հանելուկ. — Սե հինեմ, կանաչ գործեմ, դեղին կտրեմ:



### 64. Չախչախ քաղաւոր

1.

Լինում է, չի լինում աղբատ ջրաղացպան:

Մի պատուած բուրբ հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսաւեր ջրաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղաճ ու մի կտոր պանիր:

Մի օր գնում է, որ ջրաղացի ջուրը թողնի, գալիս է տեսնում պանիրը չըկայ:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում բաղաճը չը կայ:

Էս ո՞վ կը լինի, ո՞վ չի լինի: Մտածում է մտածում ու ջրաղացի շէմքում թակարդ լարում: Առաւօտը վեր է կենում, տեսնում մի աղէս է ընկել մէջը:

— Հը՞, գող անիծւած, դու ես կերել իմ պանիրն ու բաղաճը հմ. կաց՝ հիմի ես բեզ պանիր ցոյց տամ: — Ասում է



Չաղացպանն ու լինգը վերցնում է, որ աղւէսին սպանի:

Աղւէսը աղաչանք պաղատանք է անում: Ինձ մի սպանի — ասում է — մի կտոր պանիրն ի՞նչ է, որ զրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, ես քեզ շատ լաւութիւն կանեմ:


Չաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում:  
2.

էս աղւէսը գնում է, էտ երկրի թագաւորի աղբանոցում ման է գալի ման, մի ոսկի է գտնում: Վազ է տալի թագաւորի մօտ:

— Թագաւորն ապրած կենայ, ձեր կտոր մի տւէք, Չախչախ թագաւորը մի բիշ ոսկի ունի, չափենք, ետ կը բերենք:

— Չախչախ թագաւորն ո՞վ է, — զարմացած հարցնում է թագաւորը:

— Ի՞նչ զեռ չես ճանաչում, — պատասխանում է աղւէսը: Չախչախը մի շատ հարուստ թագաւոր է, ես էլ իր վեզիրն եմ: Կտոր տուր, տանենք ոսկին չափենք. յետոյ կը ճանաչես: Կտոր առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամբողջնում կտալի ճեղքում, իրիկունը բերում, ետ տալի:



— Օ՛ֆ, ասում է, զօրով չափեցինք:

— Մի՛թէ ճշմարիտ սրանք կտտով ոսկի են չափել, — մտածում է թագաւորը: Կտոր թափ է տալի, զրնգալէն մի ոսկի է վեր

ընկնում:

Միւս օրը աղւէսը ետ գալիս է թէ Չախչախ թագաւորը մի բիշ ակն ու մարգարիտ ունի. ձեր կտոր տւէք, չափենք կը բերենք:

Կտան առնում է տանում: Մի մարգարիտ է գտնում. կտխում է կտալի սրանքը, էլ ետ իրիկունը ետ բերում:

— Օ՛ֆ, ասում է, մեռանք մինչև չափեցինք:

Թագաւորը կտոր թափ է տալի, մարգարիտը դուրս է թռչում: Մնում է զարմացած, թէ էս Չախչախ թագաւորն ինչքան հարուստ պէտք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կտտով է չափում:

3.

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղւէսը գալիս է թագաւորի մօտ խնամախօս, թէ՛ Չախչախ թագաւորը պէտք է ամուսնանայ, քո աղջիկն ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է լինում:

— Ի՞նչ գնացէք, ասում է, շուտ արէք. հարսանիքի պատրաստութիւն տեսէք:

Թագաւորի պալատում իրար են անցնում. հարսանիքի պատրաստութիւն են տեսնում, իսկ աղւէսը Չաղացն է վագում:

Վագում է, Չաղացպանին աչքալուս տալի թէ՛ հապա թագաւորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, որ զնանք հարսանիք անենք:

— Վայ, բու տունը քանդւի, այ աղւէս. էտ ինչ ես արել, — ասում է վախեցած Չաղացպանը: — Ես ո՞վ, թագաւորի աղջիկը ո՞վ: Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Ի՞նչ մի վախենայ, ես ամեն բան կանեմ. — հանգստացնում է աղւէսն ու ետ վագում թագաւորի մօտ:

Վագելով ընկնում է պալատը: «Հայ, հարայ, Չախչախ թագաւորը մեծ հանդէսով գալիս է, որ պսակւի: Ճամփին թըշնամի զօրքերը յանկարծ վրա տւին, մարդկանց կտորեցին, ամեն բան տարան: Ինքը ազատեց փախաւ: Չորում մի Չաղաց կայ, եկել է մէջը մտել: Ինձ ուղարկեց, որ գամ իմաց անեմ, շոր տանեմ, ձի տանեմ, գայ պսակւի, շուտով գնայ իր թշնամիներից վրէժն առնի»:

Թագաւորն իսկոյն ամեն բան պատրաստում է, տալիս



աղւէսին, հետն էլ շատ ձիաւորներ է դնում, որ պատուով ու փառքով իր փեսին պալատ բերեն:

4.

Փալիս են հանդէսով շաղացի դասնը կանգնում: Չաղաց-պանի բուրբը հանում, թագաւորի շորերը հագցնում, նստեց-նում են նժոյգ ձիուն: Շրջապատւած մեծամեծներով, առ-ջևից ձիաւորներ, ետևից ձիաւորներ—էսպէս հանդէսով բե-րում են թագաւորի պալատը: Իր օրումը պալատ չը տեսած շաղացպան—ըզկլւած, բերանը բաց, մին չորս կողմն է, մին հագի շորերին է նայում, խլշկոտում ու զարմանում:

—Էս ի՞նչու չըտեսի նման դէս ու դէն է նայում, աղւէս ախպէր,—հարցնում է թագաւորը:—Կարծես տուն չըլինի տե-սած, շոր չըլինի հագած:

—Չէ, դրանից չի,—պատասխանում է աղւէսը:—Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թէ իր ունեցածը որ-տեղ, էս որտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ տեսակ կերակուրներ են բե-րում: Չաղացպանը չի իմանում որին ձեռք տայ կամ ինչ-պէս ուտի:

—Ի՞նչու չի ուտում, աղւէս ախպէր,— հարցնում է թագա-ւորը:

—Փալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում: Չէր կարող երևակայել, տէր թագաւոր, թէ ինչքան բան տարան և վերջապէս ինչ անպատուութիւն էր էտ մեր թագաւորի համար: Ի՞նչպէս հաց ուտի,—պատասխա-նում է աղւէսը հառաչելով:

—Բան չըկայ, դարդ մի անի, սիրելի փեսայ, աշխարհք է, էտպէս էլ կը պատահի,—խնդրում է թագաւորը:—Այժմ հարսանիք է, ուրախանանք, քէֆ անենք:

Ու քէֆ են անում, ուտում, խմում, ածում, պար գալի-եօթն օր, եօթը գիշեր հարսանիք անում: Աղւէսն էլ դառնում է քաւոր:

Հարսանիքից յետոյ թագաւորը իր աղջկանը մեծ բաժինք է տալիս ու հանդէսով ճամփայ գնում Չախչախ թագաւորի հետ:


—Կացէք, ես տաջ գնամ, տունը պատրաստեմ, դուք իմ ետևից եկէք,—ասում է քաւոր աղւէսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ մի դաշտում մեծ նախիր է արածում:

—Էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են,—Շահ-Մարինը:

—Պա՛, Շահ-Մարի անունը էլ չը տար, որ թագաւորը նրա վրա բարկացել է, զօրքով իմ ետևից գալիս է. ով նրա անու-



նը տաւ՝ գրուիւր կարել կը տայ: Որ հարցնի թէ ումն է, ասէք Չախչախ թագաւորինը. թէ չէ՛ վայն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ոչխարի հօտը սարերը բըւ-նել է:

—Էս ո՞ւմն է:

—Շահ-Մարինը:

Հովիւներին էլ նոյնն է ասում:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ընդարձակ արտեր, հրնձ-ւորները միջին հնձում են:

—Էս ո՞ւմ արտերն են:

—Շահ-Մարինը:

Հնձուրներին էլ նոյնն է պատւիրում:



Վազ է տալի վազ. տեսնում է անվերջ խոտհարքներ:

—Էս ո՞ւմն են:

—Շահ-Մարինը:

Սոտ հարողներին էլ նոյնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

—Շահ-Մար, ա՛յ Շահ-Մար, — գոռում է հեռւից վազելով: —

Քու տունը չը բանդւի, միամիտ նստել ես: Թագաւորը քեզ վրա բարկացել է, մեծ գորքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղը բանդի, տակն ու վրա անի, ունեցած շունեցածդ էլ թագաւորական գրի: Մի անգամ քեզ մօտ մի վառիկ եմ կերել. էն աղուհացը դեռ չեմ մոռացել: Վազեցի, եկայ, որ քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել:

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ, — հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռւից փոշի բարձրացնելով գալիս է թագաւորը:

— Փախի, շուտով ձի նստի, փախի, էս երկրից կորի, էլ ես չը նայես:

Շահ-Մարը իսկոյն նստում է իր լաւ ձին ու փախչում իր երկրից:

6.

Աղւէսի ետևից գալիս են հարսանքաւորները: Քալիս են գուննով, թմբուկով, երգով, գորքով, հրացան արձակելով ու ազմուկով:

Քալիս են Չախչախ թագաւորն ու իր կինը ոսկեզօծ կառքի մէջ, նրանց առջևից ու ետևից անհամար ձիաւորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են՝ մեծ նախիր է արածում:

— Էս ո՞ւմ նախիրն է, հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, պատասխանում են նախրապանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են ոչ-խարի սիպտակ հօտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է, — հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, — պատասխանում են հովիւները:

Անց են կենում: Հասնում են ընդարձակ արտերի:

— Էս ո՞ւմ արտերն են:

— Չախչախ թագաւորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Է՞ս ումն են:

— Չախչախ թագաւորինը:

Ամենքը մնացել են զարմացած, Չախչախ թագաւորն ինքն էլ թիչ է մնում խելքը թոցնի:

Էսպէսով աղւէսի ետևից գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին:

Քաւոր աղւէսն էնտեղ արդէն տէր է դառել, կարգադրութիւններ է անում: Ընդունում է խնամիներին ու նորից ըսկում են քէֆը:

Հէյ, շան երեխէք, քէֆ արէք դուք էլ.

էսպէս հարսանիք երբ կըլնի մէկ էլ,

Որ շողացաւնը դառնայ թագաւոր,

Չաղացը պալատ, աղւէսը քաւոր:

## 65. Փոքրիկ երկրագործ

Եկաւ գարուն, եկան հաւքեր,

Տարցաւ արև, զըլզըլան ջրեր.

Եկան վարի-ցանքի օրեր:

Կուռնկն ամոլ արեցի,

Սագերն հորիք լըծեցի,

Ճնճղուկն հօտաղ վարձեցի,

Կաքաւն հացւոր բռնեցի,

Արա ունէի՝ վարեցի,

Ցորեն, գարի ցանեցի:



66. Ո՞ւր է իմ արևը

1.

Կար ու չը կար մի փոքրիկ սիրուն աղջիկ:

Մի օր այդ փոքրիկ աղջիկը զարթնեց, նայեց չորս կողմը՝ տեսաւ մուլթն է: Այնպէս մուլթն է, որ հագիւ գտաւ իր գուլպաները:

Նայեց լուսամուտի կողմը: «Ո՞ւր է իմ արևը», ասաւ, «ո՞ւր է իմ պայծառ արևը»:

Վեր կացաւ, հագաւ կոշիկները, հագաւ վերարկուն: ու գնաց իմանայ՝ ո՞ւր է կորել իր արևը:

2.

Երբ տանից դուրս էր գալիս, դէմն ելաւ շրփշրփալի անձրևը:

— Բարև քեզ, անձրև, — ասաւ փոքրիկ աղջիկը: — Իմ արևը չէ՞ս տեսել:

— Այ կը թրջեմ, շը՛ փ, շը՛ փ. — ասաւ անձրևը:



— Ապա տեսնենք. — ծիծաղեց փոքրիկ աղջիկը, ու բաց արաւ հայրիկի մեծ հովանոցը:

3.

Դէմն ելաւ քամին:

— Այ քամի, դու հեռու աշխարհներից ես գալիս. չը գիտե՞ս, էսօր ո՞ւր է կորել իմ արևը, —

ասաւ փոքրիկ աղջիկը:

— Հո՛ւ, հո՛ւ, ճամփայ տո՛ւր, — բարկացաւ քամին և կորաւ գնաց:

— Ահ, ի՞նչ կոպիտն է, — մտածեց աղջիկը ու առաջ գնաց:

4.

Գնաց գնաց, ու տեսաւ երկնքում իրար ետևից վազ են տալիս սև սև ամպեր:

— Էյ, ամպեր, ամպեր, իմ արևին չէ՞ք տեսել, — կանչեց փոքրիկ աղջիկը: — Դուք արևին էնքան մօտ էք ապրում:

Ամպերը ոչինչ չը պատասխանեցին, յօնքերը կիտած անցան գնացին:

Մի բիչ էլ գնաց ու պատահեց վարդի թփին:

5.

— Սիրուն թփիկ, դու լա՛նն ես, չը գիտե՞ս, էսօր ո՞ւր է կորել իմ պայծառ արևը:

— Ախ, ես այնպէս ծարա՛ւ էի, տերևներս այնպէս փոշոտ, կոկոններս էլ թառամում էին, — փրսփրոսաց վարդի թուփը, անձրևի կաթիլները վրայից թափ տալով:

— Ես քեզ իմ արևն եմ հարցնում, — ասաւ փոքրիկ աղջիկը:

— Ախ, ես այնպէս ծարաւե՛լ էի, այնպէս շոքե՛լ: Անձրևը եկաւ, արմատներիս ջուր տաւ, տերևներս լաց:

6.

Մի բիչ էլ գնաց, տեսաւ ծիտերին:

— Ծիտիկ պի՛ծիկ, չը գիտե՞ս ո՞ւր է իմ արևը:

— Ա՞րևը: Կուզե՞ս կանչեմ, — ասաւ ծիտիկը:

Ծիտիկը թռաւ, նստեց մի բարձր ճիւղի ծայրին ու սկսեց երգել:

Առաջ երգում էր կամաց ու քնքուշ, ու ծաղիկները իրանց թաց երեսները բարձրացրին:

Յետոյ աւելի գլարթ ու աշխուժ. բոլոր կենդանիները դուրս եկան իրանց թաքնւած տեղերից:

Վերջը այնպէս սրտանց ու հրաշալի, որ ինքը արևը գլուխը դուրս հանեց սև ամպերի ետևից ու ժպտաց:



## 67. Ուլունք

Գարունը եկաւ ամպերով,  
 Ամպերը եկան անձրևով.  
 Անձրևը տանեմ արտին տամ,  
 Արտը ինձ ցորեն տայ,  
 Ցորենը տանեմ ջաղացին տամ,  
 Ջաղացը ինձ ալիւր տայ.  
 Ալիւրը տանեմ տաշտին տամ,  
 Տաշտը ինձ խմոր տայ.  
 Խմորը տանեմ թոնրին տամ,  
 Թոնիրը ինձ հաց տայ.  
 Հացը տանեմ բոշին տամ,  
 Բոշին ինձ ուլունք տայ.  
 Ուլունքը տանեմ նանիս տամ,  
 Նանս ինձ ծեծի, ծեծի,  
 Տանից բշի, դուրս անի:

- 1) Էս աստղը աղջիկ է, թէ տղայ:
- 2) Նանը ինչի՞ պիտի ծեծի:
- 3) Ի՞նչպէս է ցորենը հաց դառնում:

## 68. Աղբիւր, վտակ, գետ, ծով

Աղբիւրն ասաւ վտակին. «Էլ չեմ ուզում մենակ վազեմ  
 —բեզ հետ կը գամ»: Վտակն ասաւ. «Շատ լա՛ւ», իր հետն  
 առաւ ու—աղբիւրն էլ չերևաց:

Վտակն եկաւ գետի մօտ, ասաւ. «Ի՞նչ ձանձրալի է մե-  
 նակ ճամփորդելը—բեզ հետ կը գամ»: Գետն ասաւ. «Շատ  
 լա՛ւ», իր հետն առաւ ու—վտակն էլ չերևաց:

Գետն եկաւ հասաւ ծովին ու կանչեց. «Ի՞նչ ուրախ եմ  
 որ գտայ բեզ այստեղ—բեզ հետ կը գամ»: Ծովն ասաւ. «Շատ  
 լա՛ւ», բաց արաւ իր լայն գիրկը ու—գետն էլ չերևաց:

- 1) Իսկ ծովից ջուրը ուր է գնում:
- 2) Ի՞նչ օգուտներ են տալիս աղբիւրը, վտակը, գետը, ծովը:

Հանելուկ.—Օրան օրան շուռ է գալիս, ոսներ չունի՝ ման  
 է գալիս, բերան չունի՝ կուլ է տալիս:

## 69. Թռչունի մտածումները



Ես ապրում էի մի փոքրիկ տան  
 մէջ

Առատ ու անփոյթ,  
 Աշխարհքն ինձ համար կըլոր էր անվերջ,  
 Կեդեր կապոյտ:

Նըրանից յետոյ աչքըս բաց արի  
 Մի փոքրիկ բընում,  
 Ասի. աշխարհքը յարդից է շինած  
 Ու մայրս է շինում:

Մի օր էլ բընից գըլուխս հանած  
 Նայում եմ դէս դէն,  
 Տեսնեմ—աշխարհքը տերեւից շինած,  
 Մեր բունը վըրէն:

Հիմի թըռչում եմ հեռու, շատ հեռու,  
 Ամեն տեղ գընում,



Բայց թէ աշխարհը Ինչից է շինած,  
էլ չեմ հասկանում:

- 1) էլ Ինչ կենդանի գիտէք որ ուրիշ է ծնում:
- 2) Ինչպէս կը մտածէր արտուար, լորը, ծիծեռնակը:

Հանելուկ.—Ծիտը ճմբան ծէրին, ծաի ճուտի ճիտը ծուռ:

70. Կարևրակառուար

1.

Աստուած թռչուններին ստեղծելիս՝ ստներ տաւ ոստոստեն, թևեր տաւ որ թռչեն, կտուց տաւ որ ուտեն, ուտեն ու երգեն:

Երբ բոլոր թռչունները պատրաստ կանգնած էին նրա չորս կողմը, Աստուած բաց արաւ իր ներկերի տուփը և սկսեց գոյն գոյն ներկել նրանց փետուրները:

Աղաւնին դուրս եկաւ կապոյտ, դեղձանիկը դեղին, ագռաւը սև, ճայր սիպտակ, և այսպէս բոլոր թռչուններին ներկեց Աստուած ու գոյնգոյն զարգարեց:

2.

Միայն մնաց մէկը, որ չէր ուղեցել միւսներին հրմշտի ու առաջ անցնի, և վերջապէս նա էլ որ մօտ եկաւ, էլ ներկ չէր մնացել, Աստուած բոլոր գոյնները հատել էին: Մնացել էին դատարկ ամաններ:

Խեղճ թռչունը սկսեց լաց լինել, որ բոլոր ընկերները սիրուն-սիրուն փետուրներ ունեն, իսկ ինքը չէ:

—Լաց մի լինի,—ասաւ Աստուած,—մի բան կանենք: Ամեն մի ամանում դեռ քիչ մնացել է: Մօտ արի, տեսնեմ:

Ասաւ, առաւ վրձինը, ու մնացած ներկերը քսեց թռչունի փետուրներին: Այստեղ կապոյտ, այնտեղ գորշ, մի կտոր դեղին, մի կտոր կանաչ, մի կէտը սիպտակ, էն մի կէտը սև, գլխին կարմիր, ու դուրս եկաւ շալտիկ-կարմրակատարիկ:

71. Չարի վերջը

1.


Լինում է մի սար,  
էն սարում մի ծառ,  
էն ծառում փրշակ,  
Փրշակում մի բուն,  
Բընում երեք ձագ  
Ու վրէժն Կրկուն:

—Կնկու, կնկու, իմ կուկուններ,  
Ե՞րբ պիտի դուք առնէք թևեր,  
Թըռչէք, զընաք,  
Ուրախանաք...

Երգում էր մարիկ Կրկուն,  
Մին էլ, ընչ, Աղւէսն եկաւ:

—Էս սարը իմն է,  
Էս ծառը իմն է,  
Ծառում փրշակ կայ,  
Փրշակում մի բուն,  
Էս սիւ է եկել  
Տիրացել թաքուն:

Ախ, դու Կրկու, յիմար Կրկու,  
Քանի փորրիկ ձագ ունես դու:  
—Երեք հատ ձագ, աղա Աղւէս:  
—Երեք հատ ձագ ցոյց կըտամ քեզ  
Ու չես ասել, դու, անամօթ,  
Մինը ծառայ զըրկես ինձ մօտ:  
Ջրգի շուտով մի հատը ցած,  
Թէ չէ կացինս հըրէն սըրած,  
Գընամ բերեմ  
Ծառը կըտրեմ...  
—Վայ, չը կտրես,





Աստուած սիրես,  
էս մինն ահա  
Տար քեզ ծառայ,  
Միայն թէ էտպէս  
Մի շընջի մեզ  
Բընով—տեղով,  
Ամբողջ ցեղով:

Խնորեց մարիկ Կրկունն ու ձագերից մինը ձրգեց ներքև:  
Աղւէսը հնափ առաւ գնաց:

—Վայ-վայ, դու-դո՛ւ,  
Իմ լաւ կուկու.  
Ո՞ր սև սարում,  
Ո՞ր անտառում,  
Ո՞ր թրփի տակ  
Կորար մենակ...  
Վայ-վայ, դու-դո՛ւ,  
Իմ խեղճ կուկու...

2.

Լաց էր լինում մարիկ Կրկունն, մին էլ, ըհը՛, Աղւէսը ետ  
եկաւ:

—էս սարը իմն է,  
էս ծառը իմն է,  
Ծառում փրչակ կայ,  
Փրչակում մի բուն,  
էս ո՞վ է եկել  
Տիրացել թաքուն:

Ախ, դու Կրկու, յիմար Կրկու,  
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:  
—Երկու հատ ձագ, աղա Աղւէս:  
—Երկու հատ ձագ ցոյց կը տամ քեզ  
Ախ, չարամիտ, դու աւագակ,  
Ի՞նչ խաբար է—երկու հատ ձագ.

Ի՞նչ, ուզում ես էստեղ զօռով  
Լըցնես ամբողջ կրկուներո՞վ...  
Չըգի շուտով մի հատը ցած,  
Թէ չէ կացինս հըրէն սըրած,  
Գընամ բերեմ  
Ծառը կըտրեմ...  
—Վայ չը կտրես,  
Աստուած սիրես,  
էս էլ առ տար,  
Ու թո՞ղ դադար  
Վերջինը գէթ  
Մընայ ինձ հետ...


Աղաչեց մարիկ Կրկունն ու երկրորդ ձագն էլ ձրգեց ներ-  
քև: Աղւէսը հնափ, էս էլ առաւ ու գնաց:

—Վայ-վայ,  
Վոյ-վոյ:  
Ընչի համար  
Եկայ ես սար,  
Բուն շինեցի,  
Չագ հանեցի...  
Աղւէսն եկաւ,  
Տարաւ, կերաւ,  
Երկու, երկու,  
Կուկու... կուկու...  
Լաց էր լինում մարիկ  
Կրկունն:

3.

էս միջոցին—դա՛, դա՛, դա՛, Ազոաւն անց էր կենում էս  
կողմերով: Լըսեց Կրկուի լացի ձայնը:

—էտպէս տխուր ու դարհուրիկ  
Ի՞նչ ես լալիս, Կրկու քուրիկ:  
—Ի՞նչպէս չըլամ, ա՛ սանամէր.





Աղւէսն եկաւ էն սրբաամեն,  
Գրլխիս էսպէս փորձանք բերաւ,  
Չագուկներըս տարաւ, կերաւ:  
—Վնւյ իմ աչքին, անխելք Կրկու,  
Ինչպէս իգուր խաբւել ես դու  
Սուտ խօսքերին շար Աղւէսի:  
Ո՞նց թէ սարը իմն է՝ կասի:  
Ո՞վ է տըւել էն լըրբին սար.  
Սարն ամենքինս է հաւասար...  
Ո՞վ կը թողնի՝ վեր կենայ նա,  
Ամբողջ սարին գայ տիրանայ,  
Անունը տայ սրբած կացնի,  
Սրան, նրան սուտ վախեցնի,  
Ու մինն էսօր, միւսը երէկ,  
Չագեր տանի ուտի մէկմէկ...  
Սև Գրողի էն տարածին  
Ո՞վ է տըւել սրբած կացին.  
Մին էլ որ գայ ու սպառնայ,  
Մի վախենայ, բըշի գընայ:

էսպէս ասաւ Ագուան ու թուաւ գնաց: Ահա կրկին Աղւէսն եկաւ:

էս սարը իմն է,  
էս ծառը իմն է...

Հագիւ էր ասել, Կրկուն բնից գլուխը հանեց:  
—Սուտ ես ասում, դու խաբեբայ,  
Անխիղճ գազան, անկուշտ, ագահ:  
Ո՞վ է տըւել էստեղ բեզ սար,  
Սարն ամենքինս է հաւասար:  
Ինչ ես եկել սուտ տէր գարձել,  
Ես էլ—յիմար—ճիշտ եմ կարծել,  
Չագուկներըս տըւել եմ բեզ...

Կորի, գընա, դու շար Աղւէս,  
Հերիք ինչքան սուտ ես խաբել,  
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ:  
Կացին շունես ծառը կըտրես:

—Ո՞վ ասաւ բեզ:  
—Ագուան ասաւ:  
—Ագուանը. լա՛ւ:

4.

Ու Ագուանի վրա բարկացած Աղւէսը պոչը քաշեց, հեռացաւ: Գնաց մի դաշտում սուտմեռուկի տուաւ, վէր ընկաւ, իբրև թէ սատկել է: Ագուան էլ կարծեց՝ իրաւ սատկել է, թուաւ եկաւ վրէն վէր եկաւ, որ աչքերը հանի: Աղւէսը, հափ, յանկարծ բռնեց:

—Ղն-ղն, զն-զն,

Աղւէս աղա...

—Այ, դու կուսան, շարալեզու,  
Ո՞նց թէ Կրկին ասել ես դու  
Թէ ես կացին շունեմ սրբած...  
Կացին շունեմ... դէ, հիմի կաց...  
—Վա՛յ, բեզ մեղայ,

Աղւէս աղա,

Ես եմ ասել, չեմ ուրանում,  
Ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,  
Տնւր, ինչ պատիժ սիրտըդ կուզի,  
Բայց մի վերջին խօսքըս լըսի:  
Ես էն սաշում, հէնց դէմ ու դէմ,  
Էնպէս մի թանգ պահուստ ունեմ:  
Որ չես գըտնի դու քու օրում  
Ոչ մի թառում կամ անտառում:  
Ընչի՞ համար էն ահագին  
Գանձը կորչի հողի տակին:



Արի գրնանք, հանեմ տամ քեզ,  
էնքան ուտես, էնքան ուտես...  
Թէ չը լինի ու սուտ դուրս գամ,  
Ես հօ էստեղ միշտ կամ ուկամ...

«Գնանք, ասաւ Աղւէսը: Թէ կը լինի—շատ լաւ, թէ չի լինի—էլի բեզ կուտեմ»:

5.

Գնացին:

Վերեւից թռչելիս Ագուաը նկատել էր, որ մի թփում պառկած էր գիւղացու շունը: Աղւէսին տարաւ, տարաւ, դուրս բերաւ ուղիղ էն թփի վրա:

—Ա՛յ, ասաւ, էս թփումն է իմ պահուստը:

Աղւէսը ագահ վրա ընկաւ թփին. շունը վեր թռաւ, կողորդից բռնեց ու դրաւ տակին: Աղւէսը խեղդւելով սկսաւ խրխուալ.

—Ա՛խ, էս... ան, էս...

Չգուշ Աղւէս,

Փորձանքի մէջ

Ընկնեմ էսպէս...

Ա՛խ, անիրա՛ւ,

Դու սև ագուա՛ւ...

—Ինչքան էլ որ լինի դգուշ,

Չարի առջև թէ վազ, թէ ուշ,

էտ է պահւած, Աղւէս աղա,

Ղա՛, դա՛, դա՛, դա՛...

Պատասխանեց Ագուան ու թռաւ. ինքն էլ ազատեց, կրկուն էլ:



ԲՅՏԵՐ.

## 72. Մայրը



Մի գարնան իրիկուն դռանը նստած գրոյց էինք անում, երբ այս դէպքը պատահեց: Եւ այս դէպքից յետոյ ես չեմ մոռանում էն գարնան իրիկունը:

Ծիծեռնակը բուն էր շինել մեր սրահի օձորքում: Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օձորքին:

Եւ գարունն էր բացւում, և մեր սրտերն էին բացւում, հէնց որ նա իր գլարթ ճիշով յայտնւում էր մեր գիւղում ու մեր կտուրի տակ:

Եւ ի՛նչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծըլւելում էր մեր երգիկն, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարւում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Եւ անա նորից գարնան հետ վերագարձել էր իր բունը: Չու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճրջալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին:

էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկաւ, կտրցում կերակուր բերաւ ճուտերի համար: Ճուտերը ճեճալով դեղին կտուցները դուրս հանեցին բնից:

էդ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամենից անզգոյշը կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս ձգեց բնից ու ընկաւ ներքև:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի ետևից: Բայց հէնց էդ վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն, ճուտն առաւ ու փախաւ:

—Փիշտ, փիշտ, վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկաւ կառւի ետևից՝ նրա շուրջը թրթրա-



լով ու կտցահարելով, բայց չեղաւ: Կատուն մտաւ ամբարի տակը: Եւ այս ամենը այնպէս արագ կատարեց, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը գեռ ծղրտալով պտրտում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեխաներս, մի մի փայտ առած պտրտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկաւ ու փախաւ դունչը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատուին որ տեսաւ, մի զիւ ծղրտաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճիւղին: Այնտեղ լուռ վէր եկաւ: Մին էլ տեսանք, յանկարծ ցած ընկաւ մի քարի կտորի նման: Վազեցինք, տեսանք՝ մեռած, ընկած է ծառի տակին:

Մի գարնան իրիկուն էր, որ այս դէպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում ոչ այս դէպքը, ոչ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչպէս մերը:

### 73. Ամառայ գիշերը գիւղում

Լուսընկայ գիշեր,  
Երկինքը պայծառ,  
Մնահամար աստղեր  
Յույցըլում են վառ:

Քրնած է արդէն  
Հովտում ողջ գիւղը,  
Մըթնած ու լուռ է  
Գիւղացու հիւղը:

Յոգնած գիւղական  
Ընտանիքն անա

Սրահում, կալում  
Կամ կըտրի վըրա

Երկնքի դիմաց  
Գրկւած են քրնած,  
Վերեկցն ասես՝  
Ժրտում է Աստուած:

### 74. Արջն ու իր քոթոթները

Որսորդները ընկել էին արջի ետեկց: Արջը իր երկու քոթոթները առաջը գցած՝ ստիպում էր նրանց, որ փախչեն: Փախան, հասան գետի ափին: Արջը մի ձագի վրա մի մեծ բար դրաւ, որ չը հեռանայ, միւս ձագին բերանն առած, լող տալով անցաւ գետի այն կողմը: Գետի այն կողմն այն ձագի վրա էլ մի բար դրաւ ու վերադարձաւ այս ափը, բարը դէն շպրտեց, ձագին բերանն առաւ, անցկացրեց, դրաւ միւսի մօտ: Սրա վրայից էլ բարը վերցրեց ու ձագերին շտապ-շտապ շարժեց, ուզում էր ասել:

—Շուտ արէք, փախչենք:

Տեսաւ ձագերը սկանջ չեն դնում, սկսեց գլխներին բամփել, բայց նրանք դարձեալ ընկած էին անշարժ:

Քարերի ծանրութիւնից երկուսն էլ սատկել էին:

Մայրը հասկացաւ որ մեռած են, սկսեց գլխին զարկել. ապա երկուսին էլ առաւ գցեց շուրք, ինքն էլ ետեկց թռաւ, ընկաւ գետի մէջ ու խեղդեց:

Հեռու կանգնած՝ որսորդները մտիկ էին տալիս:

1) Ինչ էին մտածում որսորդները:

Ա. ո. ա. ծ. — Արջը տանձին չը հասաւ — գեռ խակ է՝ ասաւ:



## 75. Վարդը



Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,  
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.  
Վարդը տեսաւ, ուրախացաւ,  
Մօտիկ վազեց սիրուն վարդին.  
Սիրուն վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:  
Տղան ասաւ.— քեզ կը պոկեմ,  
Այ, կարմիր վարդ դաշտի միջին:  
Վարդը ասաւ.— Տես, կը ծակեմ,

Որ կը մոռնաս փրշոտ վարդին.  
Փրշոտ վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:  
Ու անհամբեր տղան պոկեց,  
Պոկեց վարդը դաշտի միջին.  
Փուշը նրա ձեռքը ծակեց,  
Բայց էլ չօգնեց բնքուշ վարդին.  
Քնքուշ վարդին, կարմիր վարդին.  
Կարմիր վարդը դաշտի միջին:

- 1) Փուշն քնքի համար է:
- 2) Ի՞նչով է զանազանում ծառը թրվից:
- 3) Ի՞նչով են զանազանում ծառն ու թուփը խոտից ու հացաբոյսերից:

Առաձներ.— 1) Վարդն առաց փուշի չի լինի:  
2) Ամեն ծաղիկ իր հոտն ունի:

## 76. Անձոռնի ճուտիկը

Երեք շաբաթ թուխար վեր չէր կենում ձևերը վրայից:  
Տասներկու բրդոտ ճուտեր դուրս էին եկել, մնում էր միայն  
մի կանաչաւուն փոքրիկ ճու:

Վերջապէս մի առաւօտ թուխար նկատեց, որ ձևի ներսից  
մէկը թրխկթրխկացնում է: Մաստիկ ուրախացաւ. իսկոյն  
ջարդեց ձուն կտուցով, ու միջից դուրս եկաւ ճուտիկը:

Սա նման չէր իր եղբայրներին ու բոյրերին: Աւելի բըր-  
դոտ էր, աւելի դեղին, ոտիկները կարճ-կարճ, գլուխը լայն,  
կտուցը տափակ:

Էս ի՞նչ անձոռնի է.— մտածեց մայրը, մի քիչ տխրեց,  
բայց շուտով ինքն իրեն սիրտ տուաւ թէ՛ ոչինչ, կը մեծանայ,  
կը գեղեցկանայ:

Հաւաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-հպարտ կորիս-  
կալով գնաց բակը: Փոքրիկները աշխոյժ ու արագ վազվզում  
էին նրա շուրջը. միայն նորածինը բայում էր ծանր ու  
օրօրելով:

Մայրը տարաւ նրանց  
առւի ափը բուշուշ ա-  
նելու: Անձոռնի ճուտի-  
կը շուրջ տեսաւ թէ չէ՛  
ընկաւ մէջը:


Մայրը սարսափած  
ճչում էր, կանչում,  
թևերը թափ տալիս,  
նետուում դէպի շուրջ:  
ճուտիկներն էլ ծուում  
էին, դէս ու դէն ընկ-  
նում:

— Օգնեցէք, օգնեցէք, եղբայրիկը խեղդում է:

Ամբողջ բանակը իրար անցաւ. հաւերը կրկնացին, աքլարը  
բարձր ծղրտաց, փքլած հնդկահաւն էլ ամուր դուտողու-  
տում էր:

Իսկ անձոռնի ճուտիկը թեթև շարժում էր իր թաղան-  
թաւոր թաթերը ու հանգիստ լող տալիս ջրի երեսին:

Պառաւ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի ազմուկը.





դուրս վագեց, տեսնի ինչ է պատահել: Ու խփեց ծնկանը:  
—Վայ, քոռունամ ես, էս ինչ եմ արել: հաւի տակ բարդի  
ձու եմ դրել:

- 1) Ինչո՞ւ ըստիկը կարողանում է լող տալ, եւ միայն ծուռիկները ոչ:
- 2) Եթէ թխամէրը ոչ թէ հաւ, այլ ըստ լինէր, նրա աչքին այդ տասերեք ծուռիկներից քանիսը անձոննի կերեսային:
- 3) Ի՞նչպէս կրչիներ այս պատմութիւնը, եթէ պարզապէս այդ նոյն տասերեք ձուն մի թխական ըստի տակ դրած լինէր:

## 77. Մուկիկի մանր

1.

Ծիտիկն ու Մուկիկն ախպէրացան: Գետի ափին բուն շի-  
նեցին, մտան մէջը:

Մի օր ծիտը գնաց քուղու շաներու. ետ եկաւ, տեսաւ  
Մուկիկը մեռել է: Ծընկանը զարկեց.

—Վայ, ախպէր ջան, վայ...

Օխտը ճամփի մէջ տեղը նստեց, հողը  
փորեց, տւաւ գլխին.

—Վայ, ախպէր ջան, վայ...

Ձէնի վրա Լորիկն եկաւ.

—Ծիտիկ-միտիկ, չալփետուրիկ,

Հողն ի՞նչու ես տալի գլխիդ:

—Թան, թան, ասաւ Ծիտը,

Ես որ չը տամ, ով տայ հապա.

Մուկիկի պէս ախպէր մեռաւ,

Աշխարհքն էսպէս մնաց անտէր.

Ես որ հողը տամ իմ գլխին

Մեծ բան է...

—Ափսոս, ափսոս, ասաւ Լորը.

Մուկիկի պէս մարդը մեռաւ.

Ասաւ, իրեն էնքան զարկեց,  
Թեք կոտորեց կախ արաւ:

2.

Ծառը ասաւ.

—Լորիկ քուրիկ, ճրտճրտուրիկ,

Ի՞նչու ես մի թեք կոտորել:

—Բա ի՞նչ անեմ, որ չը կոտորեմ.

Մուկիկի պէս մարդը մեռաւ,

Աշխարհքն էսպէս մընաց անտէր.

Ծիտը գլխին հող է տալի,

Ես որ իմ մի թեք կոտորեմ

Մեծ բան է...

—Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ, կանչեց ծառը,

Մուկիկի պէս մարդ մեռնի՞...

Գընաց եկաւ, գընաց եկաւ,

Իր ճիւղերը զարկեց իրար,

Ջարդեց, մընաց ճրղնակոտոր:

3.

Քարերն ասին.

—Ծառիկ-մառիկ, կանանչ թառիկ,

Ճիւղերդ ի՞նչու վէր թափեցիր:

—Վահ, ձեր տունը Աստուած շինի.

Մուկիկի պէս մարդը մեռաւ,

Աշխարհքն էսպէս մընաց անտէր.

Ծիտիկին էնտեղ հողը գլխին,

Լորը իրեն թեք կոտորած,

Իմ ճիւղերը ես որ թափեմ

Մեծ բան է...

—Հազար ափսոս, քարերն ասին,

Մուկիկի պէս մարդը մեռաւ.

Ու գոռալէն, գըրգըռալէն



Գրչորւեցին սարերն ի վար  
Թափւեցին ցած— ջրերի մէջ:

4.

Ջրերն ասին.

— Ի՞նչ պատահեց, այ զիժ բարեր,  
Չէ դուք ձեր տեղն անժաժ էիք,  
Ի՞նչ էք էզպէս ցած գլորւում:

— Էլ ի՞նչ անժաժ— բա չէք ասիլ,  
Մուկիկի պէս մարդը մեռաւ,  
Աշխարհքն էսպէս մընաց անտէր:  
Ծիտիկն էնտեղ հողը գլխին,  
Լորիկն իրեն թևը կոտրած,  
Ծառը մընաց ճրղնակոտոր,  
Մենք մեր տեղից որ գրչորւենք  
Մե՞ծ բան է...

— Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ, ի՞նչ իմացանք,  
Մուկիկի պէս մարդն էլ մեռնի...  
Ջրերն ասին, խառնւեցին,  
Ու գընացին պըղտոր-մըղտոր:

5.

էն կողմերից տըմբտըմբալով  
Պառաւն եկաւ: Էս որ տեսաւ՝  
— Ա՛յ գըլգըլան ջրեր, ասաւ,  
Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,  
Ի՞նչու էսօր պըղտորւեցիք:  
— Վա՛յ բու տունը քանդւի, պառաւ,  
Բա չէս լրսել՝ ինչ է եզել.  
Մուկիկի պէս մարդը մեռաւ,  
Աշխարհքն էսպէս մընաց անտէր,  
Ծիտը էնտեղ հողը գլխին,  
Լորը իրեն թևը կոտրած,

Ծառը էլած ճրղնակոտոր,  
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,  
Մենք պըղտորւենք՝ մե՞ծ բան է...  
— Հողն իմ գըլխին, պառաւն ասաւ,  
Մուկիկի պէս մարդը մեռնի...  
Չարկեց իրան ու ծըլատեց,  
Երեսն արաւ արիւնլըւիկ,  
Մազաքձուձ գիւղը վազեց:  
6.

Գիւղում ասին.

— Պառաւ տատիկ, ի՞նչ պատահեց,  
Ի՞նչու երեսդ արիւնլըւիկ:  
— Վայ բռանամ, մի խօսեցնէք:  
Մուկիկի պէս մարդը մեռաւ,  
Աշխարհքն էսպէս մընաց անտէր.  
Ծիտը էնտեղ հողը գլխին  
Լորը իրեն թևը կոտրած,  
Ծառը եզած ճրղնակոտոր,  
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,  
Էս իմ երեսն արիւնտեմ  
Մե՞ծ բան է...

— Ափսոս, ափսոս, հազար ափսոս,  
Որ էն տեսակ մարդը մեռաւ...  
Ափսոսացին էն գիւղացիք,  
Սև կապեցին, սուգ նըստեցին.  
— Վա՛յ, ո՞վ ասաւ, ո՞վ ասաւ...  
— Հողագըլուխ Ծիտիկն ասաւ,  
Թևը կոտրած Լորիկն ասաւ,  
Ճրղնակոտոր Ծառիկն ասաւ,  
Գըլտոր-մըլտոր Քարիկն ասաւ,  
Պըղտոր-մըղտոր Ջրիկն ասաւ,  
Մազաքձուձ Պառիկն ասաւ,



Մեր Մուկիկը մեռել է...  
էլ ո՞վ մընաց էս աշխարհքում,  
էլ ի՞նչ ապրենք էս աշխարհքում...

էսպէս ասին,  
Ու միասին  
Լացով, կոծով,  
Ճիչ-գոռոցով,  
Հաւաքւեցին ու գնացին  
Քարիցն ընկան, կոտորւեցին:


### 78. Ոգնին և օձը

1.

Ամառուայ մի տաք օր էր: Արևի կիզիչ շողերը այրում խորովում էին արտն ու արօտը: Դրսում ամեն ինչ լաւ էր: Չէր լսւում ոչ կովի բառաչը, ոչ ձիու խրխնջոցը, ոչ շան հաջոցը, ոչ այծի մկկոցը, ոչ ոչխարի մայիւնը, ոչ հաւի կշկշոցը և ոչ էլ թռչունի ծլւլոցը: Գիւղի առջևից հոսող վտակի վշտոցն էլ չէր լսւում. նա էլ լռել էր ու պապանձւեր:

Օրւայ այդ շոք պահին գիւղի բոլոր երեխաները հաւաքւել էին ձորի գլխին ու նայում էին ցած:

2.



Ներքևը, ձորի մէջ կրու-  
ւում էին ոգնին ու օձը:  
Կռիւր կատաղի էր:  
Օձը սուլում էր, թռիչք-  
ներ էր անում փշոտ  
ոգնու շուրջը, բայց ոչ  
մի կերպ չէր կարողա-  
նում բռնել: Ոգնին էլ  
փոքրիկ գլուխը հանում

էր ու յարմար բոպէից օգտւում, կծում օձի մէջքը, փորը,

վիզը ու կծկւում: Վերջին անգամ նա իր փշերի միջից հա-  
նեց գլուխը, յանկարծ բռնեց օձի պոչը և կրկին կծկւեց:

Օձը ինչքան աշխատում էր, չէր կարողանում ազատւի,  
ցաւից Փշշացնում էր, երբեմն գլուխն էր մօտեցնում պոչին,  
երբեմն մարմինն էր դէս ու դէն նետում: Ոգնու փշերը ամուր  
ու սուր էին և անխնայ բրբրում էին նրա մարմինն ու գլուխը:

3.

Հետզհետէ օձը թուլացաւ: Մարմնի վրա բազմաթիւ վեր-  
քեր կային, այլևս չէր սուլում, միայն ցնցւում էր ամբողջ  
մարմնով:

Ոգնին կծկւած էր ամուր, օձի պոչը պինդ կծած:

Բաւական ժամանակ անցաւ, մինչև օձը բոլորովին ան-  
շարժացաւ: Արդէն սատկել էր:

Ոգնին բաց թողեց նրա պոչը, զգուշութեամբ մի բանի  
անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նայեց օձին, գնաց  
ու ծածկւեց մօտակայ թփերի տակ:

Ոգնին ի՞նչ օգտաւ է տալիս:

Ա. ա. ծ.—Օձը իր շապիկը կը փոխի, բնութիւնը չի փոխի:  
Հանելուկ.—Ձու կածի՛ հաւ չի, խոտ կուտի՛ կով չի:

### 79. Չանասեր հնձուորներ

Ալէքսան

Ու իր տասնեկիննը փեսան,  
Քսան գերանդի,  
Քառսուն յեսան  
Նստեցին,  
Սրեցին,  
Կերան, խմեցին,  
Պառկեցին, բնեցին,  
Քաղեցին,  
Փոցխեցին,





Կապեցին,  
Բարդեցին,  
Վերջին անգամ որ համբեցին,  
Տեսան՝

Բարդից պակաս էր բասն:

1) Ճշարիտ «Չամասէր» հնձորները ինչպէս կանէին:

Առաժներ.—1) Հաց ու պանիր, կեր ու բանիր:

2) Լաւ հնձորը դաշտուքն էլ կը հնձի, սարումն էլ:

## 80. Վուշ

1.

Վուշը ծաղկել էր. կապոյտ, փոքրիկ ծաղիկներ, թիթեռ-  
նիկի թևերի նման փափուկ ու քնքուշ:

Արևի շողը գուրգուրում էր նրան, ցօղի կաթիլը փայլ-  
փլում էր նրա վրա, և վուշը հրճւում էր:

—Ի՞նչ քաղցր է արևը, ի՞նչ անուշ է ցօղը: Չէ, աշխարհիս  
երեսին ինձանից բախտաւոր ոչոք չը կայ:

2.

Բայց մի օր եկան մարդիկ, բռնեցին վուշը ու արմատով  
հողից դուրս քաշեցին: «Պրծա՛ւ», մտածեց վուշը:

Իրին շուրը, կարծես ուզում էին խեղդեն, յետոյ դրին  
կրակի դէմ ու չորացրին:

Բայց դրանով չը վերջացաւ: Խեղճին բռնեցին, մի լաւ  
թակեցին, զրգզրեցին, յետոյ էլ սանրեցին, անց կացրին ճախարակին  
Ֆր՛ո Ֆր՛ո, Ֆր՛ո, մանեցին: Վուշը դարձաւ թել:

Թելը հինեցին դազգահին, գործեցին, դուրս եկաւ մի  
կտոր սիպտակ կտաւ:—Էս ի՞նչ սիրուն բան դառայ,—գարմա-  
նում էր նա,—թէև մի քիչ շատ գլորեցին:

3.

Քիչ յետոյ կտաւը տարան, չափեցին, ձևեցին, մկրատով  
կտրտեցին, ասեղով ծակծկեցին, վերջապէս կարեցին մի սի-  
րուն շապիկ: Ու դրին խանութի ցուցափեղկը:

—Դէհ, հիմա ինձ տեսէք, մտիկ արէք,—փբւել էր նա,  
ցուցափեղկում պառկած:

—Չէ, աշխարհիս երեսին ինձանից բախտաւոր չը կայ:

4.

Տարիներ անցան, շապիկը հագան ու մաշեցին: Թելերը  
քրքրուել էին և ընկնում էին իրարից:

Շապիկը դարձաւ փալաս: Փալասով դռներն ու պատու-  
հաններն էին սրբում. մի օր շպրտեցին ախպանոց:

Էլ պրծա՛ւ,—մտածում էր վուշը տխուր տխուր:

Էդ միջոցին էր որ մէկը եկաւ, նրան վերցրեց, գցեց իր  
գամբիւղն ու տարաւ:

Խեղճին մանր-մանր կտրտեցին, ածեցին շրի մէջ, եփե-  
ցին, խառնեցին, բամեցին, լւացին, չորացրին, փռեցին, հար-  
թեցին, ճզմեցին, մինչև որ դարձաւ մի երկար բարակ սպի-  
տակ թուղթ:

—Վայ, է՛: Ի՞նչ սիրուն բան դարձայ,—մտածում էր վու-  
շը:—Չէ, ինձնից բախտաւոր ոչ ոք չը կայ աշխարհիս երեսին:


Թուղթը թերթ թերթ դրեցին, տարան տպարան, գցեցին  
մեքենայի տակ ու վրան տառեր տպեցին: Յետոյ էլ ծալեցին,  
կարեցին, կազմեցին, դուրս եկաւ մի գիրք:

Ահա, այդ գիրքը հիմա քո առաջն է, որի վրա կարդում ես  
բախտաւոր վուշի պատմութիւնը:

1) Վուշի սերմից ինչ են պատրաստում:

Առաժ.—Էս քեզ խրատ, էլ չը ցանես կտաւատ:





### 81. Կաշի երգը

Արի եզը, շան ծիրան, շան.  
Հորովէլ ա՛, հորովէլ ա՛...]

Ոտիդ արա, ուսիդ արա,  
Կալը կասենք, անձրև չը գայ:

Տան, ման արա, ա՛ քեզ մեռնեմ,  
Դարման արա, ցաւըդ առնեմ:

Դարմանը դու, ցորենը մենք  
Չմեռն ուտենք, հանգիստ ապրենք:

Օրը գնաց, ա՛ ծիրան շան,  
Բանը մնաց, շան ախպէր, շան:

Ոտիդ արա, ուսիդ արա,  
Կալը կասենք, անձրև չը գայ:

1) Գիւղացին ինքն է անձրևը խնդրում, եւ ինքն է անձրևից վախենում: Ի՞նչու:


2) Կալը ինչի համար է:

Ա. Ա. Օ. — Օր կայ՝ տարի կը պահի. տարի կայ՝ օր չի պահի:

### 82. Մրջնակ

1.

Անտառի բերանին մի բլրակ կար. դա մի ամբողջ քաղաքէր: Այդ քաղաքում կային երկար փողոցներ, լայն ու կռկռիկ բնակարաններ, լիքը ամբարներ, մի խօսքով ամեն բան իր տեղը, կարգին ու խելօք:



Վարպետները տներ էին շինում, մշակները պաշար էին հաւաքում մայրերի ու հայրերի համար, դայեակները երե-



խաներին էին մտիկ տալիս, իսկ դինւորները պահպանում էին քաղաքը:

Եւ հանգիստ, բախտաւոր ապրում էր այս քաղաքը: Եւ այդ քաղաքը մըջնանոցն էր:

2.

Մի օր մի սարսափելի հսկայ, ասում են (մօտիկ գիւղի տղաներից մէկը) տեսաւ այդ քաղաքը, իրահագին ոտը դրաւ քաղաքի վրա ու, Տէր Աստուած, ինչ աւերմունք արաւ:

Բնակարաններն ու ամբարները փուլ եկան, հողը լցւեց փողոցները: Դայեակները մանուկ մըջիւններին առան, անտառը փախան. հայրեր, մայրեր, մշակներ—մոլորւած դէս ու դէն ընկան: Իսկ ահագին ոտը շարունակում է փորփրել:

Միայն կտրիչ զինւորներ էին որ գլուխները չը կորցրին:

—Կոխ—կանչեցին նրանք,—կծոտենք, սպանենք այս անիրաւին:

Ու առաջ ընկան, նրանց ետեից բոլոր մըջիւնները: Յարձակւեցին հսկայի վրա, կծեցին ու թոյն լցրին, ուռցրին կծած տեղերը:

Հսկան ոտները թափ էր տալիս ու ճխլում յարձակւողներին: Քաղաքի քաջ պաշտպանողներից շատերն ընկան այս մեծ պատերազմում, բայց թշնամին վերջապէս յաղթւած թողեց քաղաքն ու հեռացաւ:

Կենդանի մնացածները վերադարձան քաղաք: Նորից շինեցին իրենց բնակարաններն ու ամբարները, մաքրեցին փողոցներն ու հրապարակները: Նորից հանգստութիւն և կարգ հաստատեցին քաղաքում:

Եւ նորից վարպետներն ու մշակները ուրախ-ուրախ աշխատում են, իսկ դայեակները կրթում են մանուկ մըջիւններին, որ մեծանան ու դառնան իրենց քաղաքի համար կտրիճ մշակներ ու քաջ պահապաններ:

1) Տղան ինչու էր քանդում մըջնանոցը:


2) Ի՞նչով յաղթեցին մըջիւնները:

Ա ո ա ծ. —1) Գիւղը վեր կենայ—գերան կը կոտրի:

2) Մէկն ամենքի համար, ամենքը մէկի համար:

Հ ա ն ե լ ու կ. —Մի գոմ ունեմ, հազար գլուխ ոչխար կը տանի, մէկ կապ խոտ չի տանի:

### 83. Երեք դեղն



Արուսեակը թրուչ-կոտելով վազեց իր սենեակը ու ձեռքի երեք դեղձը շարեց սեղանի վրա, ինքն էլ կանգնեց դի-

մացը ու երկար դիտում էր: «Ի՞նչ լաւն են, չեմ ուտի, կը պահեմ», մտածեց նա: Բայց մի բանի բոպէից յետոյ մօտեցրեց մէկը բերնին ու կծեց: Եւ շուտով կարմիր դեղձից մնաց միայն մեծ կորիզը:


«Մնաց երկուսը, էլ չեմ ուտի», հաստատ վճռեց Արուսեակը, վերցրեց դեղձերը ու վազեց խոհանոց:

Խոհանոցում կանգնած էր լւացքանողի փոքրիկ գունատ աղջիկը իր պատուած շորերով: Յանկարծ կարմիր դեղձերից մէկը դուրս պրծաւ Արուսեակի ձեռքից ու գլորւեց աղբատ աղջկայ կողմը: Արուսեակը շտապով կուացաւ, բռնեց գեղձը, ինքն էլ չէր իմանում ինչու՝ կարմրեց ու փախաւ խոհանոցից դուրս:

Երկար մտածում էր: Վերջն ինքն իրան ասաւ.

—Էս մէկը կուտեմ, միւսը կը տանեմ նրան:

Ու մէկն էլ կերաւ: Մնաց ամենից մեծը, փափուկ, կարմիր, սիրուն թաւիշի նման:



Շուտով վերջին դեղձիցն էլ միայն կորիզը մնաց:

Արուսեակը շփոթւած վազեց մօր սենեակը:



—Մայրիկ դու հօ ասացի՞ր, որ այն դեղձերը իմն են:

—Այո՛ աղջիկս:

—Եւ որ ինչ ուղենամ՝ կանեմ, չէ՞:

—Այո՛:


Արուսեակը ոչինչ չը պատասխանեց, բայց անհանգիստ էր:

—Իմն էր ու կերայ: Ի՞նչ վատ բան եմ արել որ...

Բայց ինչ էլ որ անում էր՝ լացքանողի աղջիկը աչքից չէր հեռանում:

Առաժ.—Կուշար քաղցածին մանր կը բրդի:

Հանելուկ.—Կիբը լիբը գնաց, գատարկ ետ գարձաւ:



### 84. Ճնճողուկներ

Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանելու համար,

Ճնճողուկներ թռան եկան ուտելու համար,

Կոացայ քար վեր առայ զարկելու համար:

Ղասաբներ զանակ բերին մորթելու համար,

Աղջիկներ թե քաշեցին փեարելու համար,

Պառաւներ պղինձ պրին եփելու համար:

Իռու-գրկից շուրջ բազմեցին ուտելու համար,

Տէրաէրներ խաշով եկան օրհնելու համար,

Աշուղներ սազով եկան գովելու համար:

Այ, ճնճողուկիկ,

Կարմիր տոտիկ,

Սիպտակ փորիկ,

Ուտեն կուտիկ,

Խմեն ջրիկ

Առւի եզրիկ,

Պատիկ-մստիկ,

Փախչեն երթան ման գալու համար:

1) Քարը որ վեր կայայ, քանի՛ ճնճողուկ զարկեցի:

2) Այնքան մարդ ինչ պետի մորթին ուտեին:

Առաժ.—Ձուրը չը տեսած, ոտներդ մի հանի:

Հանելուկ.—Մի մարագ, մէջը լիբը ուրագ:

### 85. Թրթուրն ու խխունջը

Կաղամբի տերևի վրա ապրում էր մի խխունջ:

Այդ տերևի մի անկիւնում արդէն վաղուց ընկած էր մի դեղին հատիկ: Այդ հատիկը թիթեռնիկի ձու էր:

Մի տաք օր ձւից դուրս սողաց մի փոքրիկ թրթուր. խխունջը զարմանքով նայում էր այդ նոր արարածին:

«Ի՞նչ չնչին, ի՞նչ ողորմելի գատ է», մտածում էր նա:


Իսկ թրթուրը շատ ուրախ էր: Նա սիրում էր տաք արևը, իր կաղամբի տերևը, ու երջանիկներ:

Մի օր խխունջը մօտ եկաւ ու պոզերը շարժելով ասաւ.

—Ձարմանում եմ, ինչո՞ւ

ես այդպէս միշտ ուրախ: Մեր կեանքը իսկի էլ այդպէս թեթեալ չէ:

—Ինչո՞ւ,—պատասխանեց թրթուրը,—շատ լաւ է: Շուտով էլ մի սիրուն թիթեռ կը դառնամ, կը թռչեմ վեր, արևի ոսկի շողերի տակ. ա՛խ, ի՞նչ լաւ կը լինի:





Խխունջը երեսը շուռ տւաւ ու ծիծաղեց.


— Ի՞նչ յիմար քաներ է դուրս տալիս սա:

Քիչ յետոյ թրթուրի ուրախութիւնը կորաւ. Թմրել մնացել էր մի տեղում:

Մի անգամ խխունջը անց էր կենում նրա կողքից, տեսաւ որ թրթուրը փաթաթել էր մի տեսակ կաշւի մէջ ու անշարժ ընկել:

— Ա՛յսպէս էլ յիմար, — բացականչեց խխունջը. — ասում էր՝ թիթեռնիկ պիտի դառնամ, ընկել սատկել է:


Մի քանի ժամանակ էլ անց կացաւ, խխունջը բոլորովին մոռացել էր իր հարեանին և ապրում էր առաջւայ պէս կաղամբի վրա: Մի օր էլ անց էր կենում նրա գերեզմանի մօտով ու յանկարծ չգարմացած կանգ առաւ. թրթուրի պատրուած կաշւի մօտ նրստած էր մի սիրուն թիթեռնիկ և նրա թաւիշ թևերը փայլում էին արևի շողերի տակ:



— Մնաս-բարով, խխունջ, ես գնում եմ, — կանչեց թիթեռնիկը, թևերը թեթև թափ տւաւ, բարձրացաւ վեր ու կորաւ արևի պայծառ շողերի մէջ:

- 1) Ինչո՞ւ թիթեռը չէր թռչում, քանի դեռ թրթուր էր:
- 2) Խխունջը փոքրիկ թրթուրին ինչո՞ւ էր ողորմելի համարում:
- 3) Ուրիշ ի՞նչ կենդանի գիտէք, որ պատեան ունի:
- 4) Ինչի՞ համար են խխունջի պոզերը:

Հանելուկ.— Պառաւը նստել է գետնին, քուրքը հագել է քուրքին, ասում է՝ մրսում եմ, հա մրսում եմ:



### 86. Վտակ

Մեր գիւղից վեր մինչ էսօր	Մեր գիժ, աղւոր խմբակով,
Մի հին ծառ կայ մենաւոր:	Աղաղակով, աղմուկով,
Պարզ լեռնային մի վտակ	Խաղում էինք, վազվզում
Խոխոջում է նրա տակ:	Քոյնգոյն, մանրիկ աւազում,
էն վրտակում կէս օրին,	Ու միշտ յոգնած ժամանակ
Երբ որ շոքից նեղանում,	Նստում էն հին ծառի տակ:
Գնում էինք լողանում:	

- 1) Ո՞րտեղից է գալիս վտակը: Ո՞ր է գնում:
  - 2) Ինչիցն է նրա աւազ է լինում ջրի ափին:
- Առաժ.— Զուրն իր ճամփէն կը գտնի:





87. Գառնիկ ախպեր

1.

Երկու որբեր,  
Քուր ու ախպէր,  
Կորած գրնում են հեռու.  
Արևը վառ,  
Ճամփէն երկար,  
Ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Քոյրը մեծ էր, ոնց որ լինէր  
Կը համբերէր արևին,  
Բայց ախպէրը փոքրիկ էր դեռ,  
Չէր գիմանում ծարաւին:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին  
Կովի ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:  
«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,  
Ի՞նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

Չէ, ախպէր ջան, չէ, դու կով կը դառնաս,  
Կովի կրճղակի տեղից մի խրմի.  
Մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,  
Առաջներըս պաղ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր,  
Քուր ու ախպէր,  
Գրնում, գրնում են հեռու.  
Արևը վառ,  
Ճամփէն երկար,  
Ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին  
Ջիւր ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:  
«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ,  
Ի՞նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

— Չէ, ախպէր ջան, չէ, դու ճի կը դառնաս,  
Ջիւր սրմբակի տեղից մի խրմի,  
Մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս՝  
Մօտիկ մի գուլալ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր,  
Քուր ու ախպէր,  
Գրնում, գրնում են հեռու.  
Արևը վառ,  
Ճամփէն երկար,  
Ոչ աղբիւր կայ, ոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին  
Գառան ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:  
Փոքրիկ ախպէրը էլ չի համբերում,  
Քրքրոջից թաքուն խրմում է պուճուր:

Քոյրը մին էլ ետ է նայում,  
Որ մի գառը մղկըտալի  
Իր ետևից տըխուր մայում  
Ու մայելով վաղ է տալի:

— Ախ, իմ Մանուկ, որբ ու անտէր,  
Իմ անլեզու Գառնիկ ախպէր,  
Էլ ոնց անեմ, ինչ անեմ ես...  
Կանչում է խեղճ Մանուշն էսպէս,

Վայ է տալիս,  
Լալիս, լալիս.




Բայց էլ ի՞նչ անէր,  
Բայց էլ ի՞նչ անէր...




Երկու որբեր,  
Քուր ու ախպէր,  
Գառն ու աղջիկ մոլորեալ,  
Հեռու հանդում  
Տըխուր-տըրտում  
Գընում, գնում են կորած:

3.

Սոված ու ծարաւ գընում են, գընում.  
Գընում են, գընում, չը գիտեն թէ ուր.  
Վերջապէս մի հով անտառ են մտնում,  
Անտառի միջին մի գանգակ աղբիւր:  
Կուշտ-կուշտ խրմում են էն սառը ջրից,  
Յետոյ Մանուշը ծառն է բարձրանում,  
Գառնիկ ախպէրն էլ ծառերի տակին  
Մուշ-մուշ արածում, արո՞՞ն է անում:  
Իրիկան պահին խրխինջ ու բըրբըջ...  
Լըցում է յանկարծ անտառն աղմուկով.  
Մօտիկ են գալի ձայները բիշ-բիշ...  
Լըսում են նըրանք ահով ու դողով...



Եւ ահա ոսկի սանձերից բըռնած  
Բերում են ջրեն ձիանքն արբայի.  
Ամեհի ձիանքն աղբիւրից խըրտնած՝  
Ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն գալի:  
Մըտիկ են տալի ծառայքը մէկ էլ,  
Որ սիրուն մի ցոլք ջրի մէջն ընկել,  
Ու ջուրը քանի ալիք է տալի,  
Նա էլ ջրի հետ գընում է-գալի:





Նայում են վերև, ի՞նչ տեսնեն, Աստուծ,  
Մի հուր-հրեղէն, մի շարմաղ աղջիկ,  
Ծառի ճիւղերին նագելի նրստած՝  
Նայում է ներքև լուրիկ ու մընջիկ.  
Մի սիրո՞ւն աղջիկ արմանք ու գարմանք:  
Զարմանք է պատում խեղճ ծառաներին.  
Տէր Աստուծ, արդեօք ի՞նչ հըրաշք է սա,  
Վայրի անտառում իջած էս ծառին:

—Ո՞վ ես, չըրնաղ, տեսիլք ես դու,  
Թէ հողեղէն արարած.

Թէ տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,  
Թէ աղջիկ ես՝ արի ցած:

Ցած եկ, տեսնենք՝ էդ ո՞նց եղաւ  
Որ ծագեցիր դու մեզ մօտ,  
Ո՞ր երջանիկ հողմը բերաւ  
Քեզ մեր անտառն անծանօթ:

«Մեզ որբութեան ցաւն է բերել  
Ձեր աշխարհը հեռաւոր,  
Պատասխանեց մեր Մանուշը  
Հառաչելով գըլխիկոր:

Մենք տուն չունենք, ոչ ապաւէն  
էս լայն արձակ աշխարհում,  
Մուկն էլ հիմի շուտով կընկնի,  
Վախենում ենք անտառում:

Ես ձեզ համար աղօթք կանեմ,  
Եթէ անէք օգնութիւն,  
էս վայրենի, խոր անտառից  
Եթէ տանէք մեզ մի տուն»:

Ու ծառաները Գառն ու աղջկան  
Անում են բերում պալատն արքայի:  
«Ո՞վ ես դու, սիրուն, հարցնում է արքան,  
Անբան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:

Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր  
Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.

Թէ ապրած կենաս անեղ թագաւոր,  
Մեր բանը, հապան, էսպէս ու էսպէս...

Թագաւորն երբ որ լըսում է մին մին՝  
Եւ շատ ցաւում է, և շատ խաւանում.  
Անում է նըրան իրեն թագունին,  
Եօթն օր, եօթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շքեղ դահլիճում,  
Լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ.  
Գառնիկ ախպէրն էլ ճոխ պարտէզներում  
Արօտ է անում ու խաղում անուշ:

4.

Պալատումը կար նախանձոտ ու շար  
Մի պառաւ կընիկ, հընուց աղախին.  
Նախանձում է սա, թէ ոնց պիտի գայ  
Մի որբ՝ թագունի դառնայ մեր գըլխին:

Մի օր էլ գալի, գըլուխ է տալի,  
Առաջը կանգնում կեղծաւոր գովում.  
—Արի քեզ տանեմ, սիրուն թագունի,  
Չրփ-չըփ լողացնեմ շարմաղ էն ծովում:

Խաբում է, տանում, գցում ծովի մէջ,  
Շորերը առնում, ետ բերում բաղաք,  
Հագցընում իր սև, դարձւոր աղջրկան,  
Պալատ ուղարկում թագունու տեղակ:

Երեսը ծածկած թանձրը շրջարշով  
Պալատ է մըանում էն սուտ թագունին,  
Ու թագաւորն էլ կասկած չի տանում,  
Թէ ով է եկել բազմել իր գահին:

Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,  
Չեն կարում էլ տուն բերեն գառնիկին.  
Բըղղում—էս ափից էն ափն է վազում,  
Բըղղում—էն ափից ետ գալի կըրկին:

Ի՞նչ անենք սըրան, ոնց անենք սըրան.  
Պառաւն ու աղջիկ շատ միտք են անում.



Վերջը գալիս է դարձնոր թագուհին  
Անկողին մըտնում, հիւանդ ձեռնում:

—Վայ, աման, մեռայ... հայ, հարայ, մեռայ...  
«Ո՞րտեղդ է ցաւում, սիրուն թագուհիս,  
Ի՞նչ կուզես, ասա», խնդրում է արքան,  
Խընդրում, գրխովը պըտոյա է գալիս:

—Ախորժակ չունեմ... ես բան չեմ ուզում...  
Բայց գառան մըսից որ լինի, կուտեմ...  
Եւ թագաւորը մընում է սառած,  
Սառած, շըւարած, կանգնած կընոջ դէմ:

«Բայց չէ որ, Մանուշ, քո եղբայրն է նա.  
Ո՞նց ես նրրա միսն ուզում դու հիմա»...  
—Ի՞նչ անեմ, ինձնից նա ազից հօ չի.  
Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...

—Վայ, հարայ, մեռայ... հայ, հարայ, աման...  
Ու թագաւորը տալիս է հրաման.

«Կրրակ վառեցէք,  
Դանակ սրբեցէք,  
Բերէք մորթեցէք  
Ախպէր-Գառնիկին,  
Որ առողջ լինի  
Իր քոյրը տիկին»:

Թագաւորն էսպէս պատւէր է տալի,  
Պատւէր է տալի ու զուրս է գալի,  
Գընում է ծովափ սաստիկ սրանեղած,  
Թէ նրբան Մանուշն անգուլթ է եղած...


5.

Մայում է, լալիս Գառնիկ-Ախպէրը,  
Լացացնում է ժէռ ծովի ափերը,  
Մի ափից բըռնած միւս ափն է թըռչում,  
Մարդկային լեզուով բըրոջը կանչում.

—Քուրիկ շան, քուրիկ,  
Կրրակ են վառում,

Կրրակ են վառում,  
Դանակ են սրում:  
Քուրիկ շան, քուրիկ,  
Լըսիր անդունդից,  
Հաւիր անդունդից,  
Սպանում են ինձ:

Լըսում է արքան՝ տեղը բար կըտրած,  
Եւ ալիքների միջիցը յանկարծ



Շատ ծանօթ մի ձայն հեռու, խոնկ ու խո՞ր  
Կանչում է քնքուշ, կանչում է անգոր.

«Ախպէր շան, ախպէր,  
Անհէր ու անմէր,  
Անքուր ու անտէր,  
Իմ Գառնիկ-Ախպէր.

Կատաղի ծովի  
Պաղ գերին եմ ես,  
Փրփրած ալիքը  
Պահապան վրէս:

Իրժար է տեղըս,  
Ձէնըս չեն լըսում,  
Ձէնըս չեն լըսում,  
Ձեռըս չի հասնում:



Ախ, չար պառաւը  
 Սև արաւ օրըս,  
 Այժմ էլ կը սպանի  
 Գառնիկ-Ախպօրըս»:

Լըսում է արքան, պալատն է վագում,  
 Պատուում է քօղը թագուհու դէմքի.  
 Պատուում է տեսնում... բայց ինչ է տեսնում,  
 Ո՛վ է իր գահին եղել թագուհի...

--Եկէք, ձկնորսներ, ուռկան ձրգեցէք,  
 Հանեցէք ծովից մեր լաւ Մանուշին.  
 Եկէք, դահիճներ, ծովը ձրգեցէք  
 Կախարդ պառաւին ու էս հըրէշին:

Այսպէս բարկացած գոռում է արքան,  
 Ժողովուրդն ամեն թընդում է ցաւից,  
 Գալիս է կանգնում, ձրգում է ուռկան,  
 Անմեղ Մանուշին հանում է ծովից:

Հանում է ծովից, գահին բարձրացնում,--  
 Յաղթում է այսպէս անմեղը կըրկին:  
 Գառնիկ-Ախպէրն էլ անշափ խընդումից  
 Պատուում է իրեն ոչխարի մօրթին,

Դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,  
 Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,  
 Ոչխարի տըկար մայիւնի տեղակ  
 Մարդկային լեզուով ազատ ու ճարտար:

Իսկ չար պառաւին, իրեն աղջրկան,  
 Որ խաբել էին աշխարհ բովանդակ,  
 Վըզներից կապում ջաղացի քարեր,  
 Չըգում են ծովի անդունդը անտակ:

Երկու օրբեր,  
 Քուր ու ախպէր,  
 Առած պատիւ, գահ ու թագ.  
 Աշխարքն էլի  
 Խաղանդ ու լի,  
 Չարը թաղեած ծովի տակ:



## Ց ա ն կ


1. *Առաւօտ . . . . .	3	31. *Յուրաք փշեց (Մ. Նալ- բանդեանի) . . . . .	39
2. Ասածու սեղանը . . . . .	4	32. Անտառի տնակը (Գրիմմ) . . . . .	40
3. *Հովիի հրաժեշտը (Շիլ- լեր) . . . . .	6	33. Շունն ու նապաստակը . . . . .	46
4. Ծիծեռնակների շուն . . . . .	6	34. *Ծաղիկները . . . . .	47
5. *Ծիծեռնակ (Դոդոն) . . . . .	7	35. Չմեռը . . . . .	47
6. Ճամփորդներ . . . . .	8	36. *Կոյր աշուղը . . . . .	49
7. Եղնիկի տէրը . . . . .	9	37. Փողը . . . . .	49
8. *Աշուն . . . . .	10	38. Երկրի շուրջը . . . . .	50
9. Խելօք հաշիւ . . . . .	11	39. *Այրի կնոջ երգը . . . . .	51
10. Փոքրիկ խանութպան . . . . .	11	40. Ոսկու կարասը . . . . .	52
11. Ծիրաններ . . . . .	13	41. *Թող փշի բամին (Գ. Քաթիպա) . . . . .	54
12. *Փիսօն . . . . .	14	42. Քեռի Սիմօնի նապաս- տակը . . . . .	54
13. Սուտասան . . . . .	15	43. *Վէճ . . . . .	57
14. Դասին . . . . .	16	44. Աղւէսը բաժանարար . . . . .	58
15. Նապաստակն ու կրիան . . . . .	17	45. *Գարուն (Գ. Քաթիպա) . . . . .	59
16. Զուրը փախաւ . . . . .	17	46. Խաղը . . . . .	60
17. Ամպի երեխաները . . . . .	18	47. *Կանանչ ախպէր . . . . .	60
18. *Աշնան վերջը . . . . .	19	48. Առիւծի երազը . . . . .	61
19. Եկեղեցին կորել է . . . . .	20	49. *Մարտը . . . . .	62
20. Խօսող ձուկը . . . . .	21	50. *Գարունն է եկել (Գ. Քաթիպա) . . . . .	63
21. *«Պօղոս-Պետրոս» . . . . .	25	51. Թէ ինչու են ծաղկում մանուշակները . . . . .	63
22. Գիտենք . . . . .	28	52. Մանուշակները (Դոդո- նեան) . . . . .	64
23. Կացին ախպէրը . . . . .	29	53. Ածխարարն ու պարոնը . . . . .	65
24. *Ուրազ և սղոց . . . . .	30	54. *Մեղու (Գ. Քաթիպա) . . . . .	66
25. Փոքրիկ մշակը . . . . .	31	55. Լամպն ու արեւը . . . . .	67
26. *Շունն ու կատուն . . . . .	32		
27. Համիլիի աղօթքը . . . . .	34		
28. Բրդոտ խաղընկերը . . . . .	35		
29. *Ամպն ու սարը . . . . .	37		
30. Իշուկի գանգատը . . . . .	38		



56. *Արագիլ . . . . .	68	72. Մայրը . . . . .	97
57. Արագիլները Անդերսէն	68	73. *Ամառայ գիշերը գիւղ	98
58. *Ծիծեռնակ Գ.Քաթիպ.)	72	74. Արջն ու իր քոթոթները	99
59. Մժողովրդ . . . . .	73	75. *Վարդը (Գեօթէ)	100
60. *Արօր (Րաֆֆի) . . . . .	76	76. Անճոռնի ճուարիկը . . . . .	100
61. Զիու արտունջը . . . . .	76	77. Մուկիկի մահը . . . . .	102
62. Հատիկի զարթնելը . . . . .	77	78. Ոգնին և օձը . . . . .	106
63. *Գուլթան . . . . .	78	79. *Զանաւէր հնձուրները	107
64. Զախչախ թագաւոր . . . . .	79	80. Վուշ . . . . .	108
65. *Փոքրիկ երկրագործ . . . . .	85	81. *Կալի երգը . . . . .	110
66. Ո՛ւր է իմ արևը . . . . .	86	82. Մըջնանոց . . . . .	111
67. *Ուլունք . . . . .	88	83. Երեք դեղձ . . . . .	113
68. Աղբիւր, վտակ, գետ, ծով	88	84. Ընձողուկներ . . . . .	114
69. *Թռչունի մտածմունքը	89	85. Թրթուրն ու խըխունջը	115
70. Կարմրակատար . . . . .	90	86. *Վտակ . . . . .	117
71. *Զարի վերջը . . . . .	91	87. *Գառնիկ ախպէր . . . . .	118

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Այգի . . . . .	6	9. Յորեն . . . . .	78
2. Ըամփայ . . . . .	9	10. Արտ . . . . .	78
3. Տասներկու ամիսներ	10	11. Զուր . . . . .	89
4. Երկինք, աստղեր . . . . .	16	Պիտի լինի շուտասելուկ	90
5. Գիրք, տառեր . . . . .	16	12. Կրիայ . . . . .	107
6. Զրհօր . . . . .	18	13. Մըջնանոց . . . . .	113
7. Ծով . . . . .	51	14. Գղալ . . . . .	113
8. Պատրոյկ . . . . .	67	15. Բերան . . . . .	117



Համբար  
ՔԱՐՍԱՆԱՆ



2

277  
A. H. U. I. 6 U. 3